



ԱՌ ԲԱԲԱԽՈՒՄՆ ՄՇՏՆՋԵՆՈՒԹՅԱՆ

Այս պատմությունն սկիզբ առավ 2016 թվականի մայիսի 1-ին: Այս պատմությունը վերստին ծննդյան և սիրո պատմություն է: Ծննդյան, որովհետև գրականության լուսեղեն երկնքում անմահացած բանաստեղծի՝ Արարատ Մկրտումյանի ծննդյան օրն է, և սիրո, որովհետև արդեն ինը տարի այս օրը ոգեկոչում ենք բանաստեղծի հիշատակը ոչ միայն խնկարկունով, այլև նրա գրականությամբ: Մայիսի 1-ը Արարատ Մկրտումյանի անունով և բանաստեղծությամբ թագադրման օր է: Օր է, որ համախմբում է Շիրակ և Լոռի աշխարհների՝ մինչև երեսունմեկ տարեկան երիտասարդ ստեղծագործողներին՝ իրենց ստեղծագործական վերթերումներին զգայական շունչ տալու և շոշափելիորեն զգալու արդյունքը:

«Արարատ Մկրտումյան» գրական երիտասարդական հիմնադրամը ստեղծվեց բանաստեղծի եղբոր՝ Արթուր Մկրտումյանի նախաձեռնությամբ և հովանավորությամբ, ՀԳՄ Շիրակի մարզային բաժանմունքի հետ համատեղ ամրագրվեց այս փաստը, որն, անտարակույս, հանրապետական նշանակություն ստացավ կարևորվելով ՀԳՄ նախագահ, բանաստեղծ Էդվարդ Միլիտոնյանի կողմից: Մայիսի 1-ը՝ խորհրդանշական այդ օրը, սկիզբ դարձավ գեղեցիկ հոգացման՝ Արարատ Մկրտումյան գրական մրցանակաբաշխության:

Ամեն տարի Շիրակի և Լոռու մարզերի (հերթագայությամբ) երիտասարդ ստեղծագործողները ներկայացնում են իրենց չափածո ստեղծագործությունները, որոնք տեղ են գտնում նաև «Արարատ Մկրտումյան» գրական հիմնադրամի ֆեյսբուքյան էջում: Արդյունքում՝ «Արարատ Մկրտումյան» գրական հիմնադրամը հովանավորում է առավելագույն գնահատականի արժանացած մասնակցի բանաստեղծությունների ժողովածուի լույսընծայումը, իսկ խրախուսական մրցանակի արժանացած երիտասարդների գործերը տպագրվում են գրական անթոլոգիայում:

Արդեն երրորդ տարին է, որ մրցանակաբաշխությունը տեղի է ունենում նաև արձակ անվանակարգում՝ համաժամանակյա: 2025 թվականի մայիսի 1-ին

Գյումրիում՝ «Բեռլին» հյուրերի տան դահլիճում, կայացավ Արարատ Մկրտումյան 9-րդ գրական մրցանակաբաշխությունը՝ պոեզիա և արձակ անվանակարգերում: Այս տարի պոեզիա անվանակարգում իրենց բանաստեղծություններն էին ներկայացրել Շիրակ աշխարհի երիտասարդ ստեղծագործողները:

Պոեզիա անվանակարգում գլխավոր մրցանակի արժանացավ Միշա Մանուկյանը՝ Շիրակի մարզի Սարալանջ գյուղից: Նրան հանձնվեց Արարատ Մկրտումյանի դիմապատկերով հուշամեդալ և առաջին մրցանակի արժանացած գիրքը՝ «Սիրո խրամատ» վերնագրով:

Այս անվանակարգում Շիրակի մարզում ապրող տասներեք հեղինակներ խրախուսական մրցանակի արժանացան: Նրանց ստեղծագործություններն ընտրողաբար տպագրվել են «Հույզի հանդերձներ» խորագրով բանաստեղծական անթոլոգիայում:

Արձակ անվանակարգում խրախուսական մրցանակների և Վկայագրի արժանացան Շիրակի ու Լոռու մարզերից տասնվեց հեղինակներ, որոնց ստեղծագործությունները տպագրվել են «Անպարզիծ» անթոլոգիայում: Այս անվանակարգում գլխավոր մրցանակ չէնդրիվեց:

«Արարատ Մկրտումյան» գրական հիմնադրամը համագործակցում է «Արմավ» հրատարակչության հետ:

Օրվա հանդիսության անակնկալներից մեկը բանաստեղծ Արարատ Մկրտումյանի թոռնուհու՝ Կարինե Լոռեցյանի ելույթն էր: Նա ներկայացրեց բանաստեղծի «Դռները բացվում են» ստեղծագործությունը, որի համար ասումների հանրապետական մրցություն չափել էր մրցանակ:

Ներկաներին և մրցույթի մասնակիցներին իրենց ելույթներում ողջունեցին ՀԳՄ Շիրակի մարզային բաժանմունքի նախագահ, բանաստեղծ, մրցանակաբաշխության հանձնախմբի անդամ Անդրանիկ Կարապետյանը, ՀԳՄ Լոռու մարզային բաժանմունքի նախագահ, մրցանակաբաշխության հանձնախմբի անդամ, բանաստեղծ Մանվել Միկոյանը, Ա. Մկրտումյան մրցանակաբաշխության հանձնախմբի անդամ, բանագիտ. թեկնածու Վալերի Փիլոյանը, բանաստեղծ, թարգմանիչ

Խորեն Գասպարյանը, «Արմավ» հրատարակչության գլխավոր խմբագիր, բան. գիտ. թեկնածու Արմեն Ավանեսյանը: Ելույթ ունեցավ նաև գրականագետ Արթմենիկ Նիկողոսյանը:

Շնորհակալության և գնահատանքի խոսքեր ասացին գլխավոր մրցանակակիրը և մրցանակաբաշխության մասնակիցները:

Ուշադրության արժանի մեկ կարևոր իրողություն. Արարատ Մկրտումյանի և նրա գրչակից սերնդակիցներ՝ Տիգրան Զեթագի, Հայկանի Տոնոյանի, Նորայր Բաղդասարյանի բանաստեղծությունները թարգմանվել են ռուսերեն և պարբերաբար ընթերցումների միջոցով հնչում են ռուս ընթերցողի համար «Հեռանալ: Մնալ: Ապրել»: Նախագծի շրջանակներում: Ընդհանրապես նախագծի շնորհիվ նույն խորագրով տպագրվում է անթոլոգիա, որտեղ ընդգրկվում են մինչև քառասուն տարեկան վաղաձեռիկ բանաստեղծների ստեղծագործությունները: Հայ պոետների ստեղծագործությունները հրապարակվել են «Русский переплет» ինտերնետ-ամսագրում, ժամանակ առ ժամանակ ներկայացվում են և՛ Մոսկվայում, և՛ ՌԴ այլ քաղաքներում:

2024թ. «Новый мир» ամսագրում, որը Ռուսաստանի հնագույն գրական-գեղարվեստական ամսագրերից է (տպագր. 1925 թվականից), լույս տեսան Արարատ Մկրտումյանի և Շիրակ աշխարհի վաղաձեռիկ բանաստեղծների ստեղծագործությունները (թարգմ. Ս.-Ա. Հարությունյան, Ն. Միլեշկին, Ե. Կուկինա, Օ. Բլագինին)՝ գրականագիտական փոքրիկ ակնարկներով: Կյանքից վաղ հեռացած հայ պոետներին ռուս ընթերցողին ներկայացնելու գաղափարը մոսկվայեցի բանաստեղծ, թարգմանիչ, մշակութաբան Սլավի-Ալիկ Հարությունյանին է, որը դրական արձագանք ստացավ «Հեռանալ: Մնալ: Ապրել» նախագծի համակարգող բանաստեղծ, թարգմանիչ Նիկոլայ Միլեշկինի և աշխատանքային խմբի կողմից (բանաստեղծ, գրականագետ Ելենա Կուկինա, բանաստեղծ գրաքննադատ Բորիս Կուտենկով և այլք):

Գրական ցերեկույթի եզրափակիչ խոսքը «Արարատ Մկրտումյան» մրցանակաբաշ-

խության հիմնադիր Արթուր Մկրտումյանինն էր: Նա շնորհակալություն հայտնեց հրավիրյալներին, Շիրակի և Լոռու մարզերի գրողների միության ողջ թիմին, ժյուրիի անդամներին, առանձնահատուկ շնորհակալություն փոխանցեց նաև Էդվարդ Միլիտոնյանին, որը մեծ ավանդ ունի այս գործընթացներում, և բոլոր նրանց, ովքեր իսկապես ծնեցին այս երևույթը և բերին հասցրին այս օրվան:

Այնուհետև դիմեց երիտասարդ ստեղծագործողներին. «Ես Գյումրի գալիս եմ կամ Ալավերդուց, կամ Երևանից և անցնում եմ երկու հրաշք տաղանդի կամարների տակով՝ Երևանից գալիս Գալշոյանի կամարի տակով, Ալավերդուց գալիս՝ Զաչուրի մոտ՝ Միմասի կամարի տակով: Երկու կամարից էլ, որ ներս ես մտնում Գյումրի, պատկերացնում ես, թե ինչ է լինելու. իսկապես արիեստների քաղաք, արվեստների քաղաք, մշակույթի քաղաք և յուրահատուկ մարդկանցով: Մենք երկրամաս ունենք, որտեղ անտառն ու ծառերն են շատ, և երկրամաս ունենք Հայաստանում, որտեղ տաղանդավոր մարդիկ են շատ, և նրանք անտառ են ստեղծում:

Այնպես որ Գյումրու լերկ լանջերը, սառը հովիտները կոմպենսացվում են շատ տաք սիրտ ունեցող տաղանդավոր մարդկանցով: Պահեք այդ ցուցանիշները, զարգացրեք և անպայման մեկնեկու փոխանցեք, ընդարձակեք այն տաղանդը, որ դուք ունեք, իսկապես շատ աշխատեք. այսօր ձեր ձեռքին հեռախոս է, որը ողջ համաշխարհային գրականությունը դրել է ձեր գրպանը: Իսկ ավագներն ինչպես էին գրականություն ճարում, որ կարդան, պատկերացնում էք... Շատ կարդացեք, իրար շատ քննադատեք: Թող ձեր մտքերի հորիզոնը դառնա անձայրածիր, ինչպիսին գրականության հորիզոնն է»:

Ահա այսպես՝ բանաստեղծի մի ծննդյան օր էլ արժևորվեց նրա ոգեղեն ներկայությամբ: Բառը բարձրացավ, բացեց թևերը և բացվեց Արարատ Մկրտումյանի յուրօրինակ բանաստեղծական աշխարհում բխեցնելով պոեզիայի զուլալ ու թաքնված ակունքները՝ տառապանքի, զղջումների, մեթոմոների, սիրո և երազի:

Սոնա ԱՆՏՈՆՅԱՆ



ՄԻՇԱՍՏԱՆՈՒԿԵԱՆ

ՍԻՐՈ ԽՐԱՄԱՏ

Դու լքեցիր ինձ,
Վերցրիր, ինչ որ հնարավոր է,
արտաքսեցիր ինձ գրկիցդ
ու շտապեցիր հեռանալ...
Ես չլքեցի ինձ,
չմնացի քո ու «կարոտ»
բառի արանքում,
քաղաքի անշունչ մայթերին
ընկնելով ու բարձրանալով
գնացի ու եկա,
եկա ու գնացի...
Չհետապնդվող արևի
շողքերը
հագիվ էին տաքացնում
իմ սառած մատները,
բայց ես գնում էի ու գալիս,
գալիս էի, որ գնայի...
Ու թե քեզ նման հարյուրն էլ
գան ու գնան,
գնան ու գան,
ես չեմ լքի ինձ,
բառերն
ու տողերն այս:

Ես պոետ եմ,
անտուն էլ կապրեմ...

Գիշեր էր՝
բանաստեղծություն
գրելու նման սպասված,
դու կանգնած էիր
հոլովումների ստվերում,
բառերից հետո
ավելացվող տառերի նման,
և մեզ դուր էր գալիս

այս ամենը:
Գիշերը հոլովեց
ինձ ու քեզ
իր բոլոր հոլովներով...

...Եվ դու պարզապես՝
մի դուստր Եվայի,
և ես պարզապես՝
մի որդի Ադամի,
հիմա ուր էլ մոլորվեմք,
իրար ենք պատահելու
այն առավտի նման,
որ պիտի գա,
հեռացող մայրամուտի նման,
որ պիտի գնա,
այն արցունքների նման,
որոնք պիտի թափվեն,
այն պատերազմների նման,
որոնք պիտի ավարտվեն,
այն գիշերների նման,
որոնք պիտի լուսանան,
այն հանդիպումների նման,
որոնք պիտի կայանան...

Մենք դեռ
պատահելու ենք իրար
այս բանաստեղծության նման,
մի մատ խորքից,
մեծատառով,
իրար գրկած ու անվերնագիր:

Երբ արտասվող ծառերից
կթափվեն հուշե փաթիլներ,
ես կգամ,
կմոտենամ պատուհանիդ,
կնայեմ հայացքիդ,
որ բարուրում է
մի չքնաղ երեխայի,
հետո կթաքցնեմ
թրջված հայացքս
ծյունախառը մայթերին
ու կհեկեկան

անցած օրերի,
չասված բառերի
ու թաքցրած
զգացմունքների մասին,
երկար, շա՛տ երկար
կլնեմ աշխարհի բոլոր
լեզուներով
և կհեռանամ...

Աշխարհն ի՞նչ անկարգ է
դարձել.
թող ձեռքերդ
թաքցնեմ սրտագրպանում իմ,
թող գեղեցկությունդ
բարուրեմ հիմա,
աշխարհն անկարգ է
դարձել, իմ սե՛ր:
Ո՞ւր գնամ, որ լսեմ
ոտնածայներդ,
որտե՞ղ շնչեմ, որ
բույրդ զգամ,
ե՞րբ քնեմ, որ երագովս
անցնես,
արի՛, իմ սե՛ր, աշխարհն
անկարգ է դարձել:

Եթե նկարիչ լինեի,
կնկարեի քեզ,
որ մնայիր
հիշողության մեջ մատներիս,
և երբ փակեի աչքերն իմ՝
քեզ կարոտող,
նրանք իսկույն քեզ նկարեին...

Ու նա երբեք չի անցնի
ձեր փողոցով,
չի քայլի քո հետևից
կամ կողքի մայթից
չի հասկացնի քեզ,
որ քայլելու պատճառը դու ես,
պատուհանիդ տակ

չեն սառչի նրա մատները,
էլ չի սպասի այգում
ծաղիկների փնջով...
Այդ ամենը հեքիաթ կդառնա
ու կավարտվի այսպիսի
վերջնատողով.
«Պատերազմ էր,
ու նա հետ չեկավ...»:

Բարի՛ լույս, օրիո՛րդ,
Բարի՛ լույս, օրիո՛րդ,
այսօր էլի նույն ջինսը
կհագնես
ու բլուզը այն կապույտ,
որ արևածագի հետ
ես էլ ծագեմ,
ես ի՞նչ եղավ,
մեկն ինձ ասաց,
թե դու էլ իմը չես,
մեկն ինձ խաբե՞ց,
թե դու իրոք էլ իմը չես:
Բարի լո՛ւյս, օրիո՛րդ,
այսօր կրկին դու իմն ես,
արևածագի հետ
ես էլ ծագեցի,
ես ի՞նչ եղավ,
քո մասին եմ միայն գրում
սիրագրեր,
խաղեր,
տաղեր,
հատիկ-հատիկ
քեզ համար եմ...
Բարի լո՛ւյս, օրիո՛րդ,
այս մի օրն էլ հաշտվեցինք՝
քեզ գրկելու, համբուրելու...
Իրավունքը ինձ վստահված
ես չեմ թողնի անեանա,
քո բլուզը ու քո ջինսը՝
հին օրերի պես,
այնքան փայլուն էին,
որ ծագեցի, երբ դու եկար...
Բարի՛ լույս, օրիո՛րդ...

ԵՂԵԳԱՆ ՓՈՊ

Սրտացավ
Բժիշկը դեղահաբ նշանակեց,
Պատկերացնո՞ւմ ես,
մեկ բաժակ ջրով
և մեկ հաբով,
ինձ քեզնից
գրկել ուզեցին...

Այս ոտքաչափ երկրում
ամեն ինչ ապօրինի է,
բացի մեր սիրուց...
Այս մոռացված երկրում,
երբ քարտեզի վրայից
համարյա թե ջնջվում ենք
մի թիզաչափ քաղաքում,
մենք շարունակում ենք
պրկել կայարաններում և
այգիներում փակցված
բոլոր «Զսիրել»-ները...
Այս չղեկավարվող երկրում,
ուր գրեթե բոլորը
սխալ լինելով
միշտ ճշտի մասին են խոսում,
մենք սուսուփուս
գրկախառնվում ենք
ու մեր համբույրները խցկում
ճակատագրով չսահմանված
(և մի փոքր էլ տարօրինակ է),
բայց ոչ արհեստական
շուրթերի մեջ...
Այս սխալ հասցեներով
խեղճ ու կրակ երկրում,
բոլոր հաղթանակներից էլ ավելի
գերադասում եմ պարտվել
քո գրկի մեջ,
և խնդրում եմ քեզ,
իմ օրինականություն,
ինձ գրկի՛ր այնպես,
որ պատերազմը վերջանա
այս ձեռքից ձեռք ընկած
ԵՐԿՐՈՒՄ...

ԿՈՒՄԱՅՐԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԸ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Շիրակ գավառի վերաբեր-
յալ պատմական գրավոր առա-
ջին հիշատակությունն արվել է
Արարատյան, այսպես կոչված,
Ուրարտական թագավորու-
թյան արձանագրությունների մեջ:
1862 թ. ռուսաստանցի հետազո-
տող Քեստները Գյումրիից 8 կմ
հյուսիս-արևմուտք գտնվող Մար-
նաշեն գյուղի մոտ հայտնաբերեց
Վանի արքա Արգիշտի I-ի Ք.ա.
774 թ. քառատող սեպագիրը:
Պատմագիտական գրականու-
թյան մեջ «Ղանլիջայի բևեռագիր»
անունով հայտնի արձանագրու-
թյունում Արգիշտին ասում է, որ
Խալդի աստծո մեծությամբ. Նվա-
ճեցի (ես) Երիախի (ցեղի) երկիրը,
նվաճեցի Իրդանիունի (թաղաքը),
մինչև Իշկիգուլու (երկիրը):

Արգիշտի Առաջին արքան
արշավանքների ժամանակ գրա-
վել է Շիրակի դաշտավայրն
Ախուրյանի տարածքներով ու
շրջակա երկրամասերով՝ «Երիա-
խի երկիրը» (Eriahi): Հայկա-
կան լեռնաշխարհի «Երիախի»-ն
հարուստ ցեղային երկրներից
մեկն էր՝ հայտնի իր զարգացած
տնտեսությամբ, հացահատիկի
պաշարներով, մանր ու խոշոր
եղջերավոր անասունների և ձիե-
րի մեծ քանակությամբ, ինչպես
նաև ռազմական ուժերով՝ ընտիր
հեծելազոր ու ծանր հետևակա-
զոր: Այստեղ հիշատակվող «Իր-
դանիունի (թաղաքը)», ինչպես
դիտվել է մի շարք ուսումնասի-
րողների կողմից (Հ.Գաբրիելյան,
Հ.Կարապոյան, Ս.Պետրոսյան),
տեղադրվում է Գյումրիի տարած-
քում կամ նրա շրջակայքում և

նույնացվում է «Կումայրի» հնա-
վայրին: Այսինքն՝ Իրդանիունի
թաղաքը եղել է «Երիախի երկրի»
կենտրոնատեղին՝ նրա «արքա-
յական թաղաքը», որտեղ խա-
չածնվել են ոչ միայն Երիախի և
Հայկական լեռնաշխարհի չորս
կողմերն իրար կապող, այլ նաև՝
Կովկասից Առաջավոր ու Փոքր
Ասիա տանող ճանապարհները:

Հ. Կարապոյանը («Կումայ-
րին ըստ սեպագիր և այլ աղբ-
յուրների») Կումայրի տեղանունը
հետևյալ կերպ է ստուգաբանում,
որ Կում և այրի երկու բաղադրիչ-
ներն էլ ունեն գրեթե միատեսակ
իմաստներ՝ «գյուղ» կամ «բնա-
կավայր», այսինքն՝ Կումայրի
նշանակում է ինչ-որ բնակավայրի
արվարձան՝ Իրդանիու թաղաքի
արվարձան:

Սարգիս Պետրոսյանն «Իրդա-
նիունին» տեղադրում է Գյումրիի
մոտակայքում արևմտյան մա-
սում նույնացնելով «Կումայրի»
բնակատեղիի հետ, որը գտնվում
է թաղաքի «Զարկըզի ձոր» կոչվող
գետակի ձախ ափին: Պետրոսյանի
կարծիքով «Կումայրի» հնավայրը
Irdaniu թաղաքն է և այդ անունն
ստացել էր Irdan կոչված գետի
ափին գտնվելու պատճառով:

Բնակավայրի «Կումայրի»
անվանման նախաձևը համար-
վում է տեղանքի արգասիք ու
նշանակում է «քարանձավային»,
հետևաբար Կումայրին «քա-
րայրների խումբ» կամ «շատ այ-
րեր ունեցող» իմաստն էլ կարող
է ունենալ: Երենմիա Մեղրեցու
«Բառգիրք Հայոց»-ը մեկնաբա-
նում է, որ այդ բառը նույնական
է «քարայր» բառին: Ս. Պետրոս-
յանի կարծիքով, Կում-այրի անու-
նը «նշանակում է «այրախումբ»,
այսինքն «քարանձավների
խումբ», որովհետև այստեղ կում-
բաղադրիչը նույնական է հայերեն
ակումբ (ա-կում-բ, հնում «խումբ,
ժողով, բազմություն») բառի կում

արմատի հետ, իսկ -այրի բա-
ղադրիչը նույնական է այդ «քա-
րանձավ» բառի հետ»: Կումայրի
սկզբնաձևի հնչյունային փոփո-
խությունը երկու բառերի միա-
ցումից նոր բառի առաջացման
արդյունք է, և պատահական չէ,
որ «Կումայրի» անվան ծագում-
նաբանության, բնակավայրի տե-
ղանվան ու տեղադրման հարցե-
րում պատմագրության մեջ մի
շարք պատմաբաններ ու լեզվա-
գետներ ներկայացրել են տար-
բեր կարծիքներ:

Միջնադարյան հայ մա-
տենագրության մեջ Կումայրի
անվամբ բնակավայրը հիշա-
տակվում է համահայկական մի
մեծ ազատագրական ապստամ-
բության (774-775 թթ.) առիթով.
«...հասաներ ի գաւառն Շիրակ ի
գիւղն Կումայրի» և, ըստ Ղևոնդ
պատմիչի, հակաարաբական
ապստամբությունը գլխավորեց
իշխան Արտավազդ Մամիկոնյա-
նը, որն էլ «սպասանէր զիրանա-
մատար հարկին» խլելով արաբ-
ների թալանած ավարը: Շիշտ է,
այդ ապստամբությունն ի վերջո
ճնշվեց, սակայն կարևոր նշանա-
կություն ունեցավ, մի կողմից՝ հայ
ժողովրդի տնտեսական դրու-
թյան թեթևացման տեսանկյունից,
մյուս կողմից՝ արաբական խալի-
ֆայության տիրապետության դեմ
հայ ժողովրդի մղած պայքարի
վերջնական հաղթանակի համար:
Շիրակի հնագույն բնակավայր
Կումայրի-Գյումրին «Կումիրոյ»
ձևով երկրորդ անգամ հիշատակ-
վում է 13-րդ դարում: Մատենա-
դարանում պահպանված է Հառի-
ճի վանքում գրված մի հնագույն
ձեռագիր-պատառիկ (ՄՄ, թիվ
1886, 1 թերթ), որի մաշված տո-
ղերի մեջ արժեքավոր տեղեկու-
թյուններ են պահպանվել հին «Կու-
միրի» մեծ գյուղաքաղաքի մա-
սին: Այն պատմում է, որ ձեռագիրն
այլազգիների ձեռքից «ազատեցի

ի գերողաց, և իր «արդար ընչից»
գումար հատկացնելով՝ փրկագ-
նել է Հովասափ անունով մի ծեր
հոգևորական. «Եւ մեղուցեալ
եւ յետինս ի կրանաւորս Ովա-
սափս, որ էի ազգաւ եւ տոհմիւ ի
մեծ գեաւղաքաղաքէն Կումիրոյ»:
Այսինքն՝ պատառիկը հայագի-
տության մեջ մի վկայական է, որը
հավաստում է, որ 1209 թ. Կումայ-
րին ոչ միայն գյուղաքաղաք էր,
այլև «մեծ գեաւղաքաղաք»:

«Կումայրի»-ն որպես բնակա-
տեղի ունի նաև իր քարակերտ
հավաստագիրը: Այդ են վկայում
նախկին «Կումայրի» տուրիստա-
կան հանգրվանի բակում գտնված
հին տապանաքարերի բեկորնե-
րը, որոնցից հայատառ արձա-
նագրությամբ մեկը պահվում է
«Կումայրի» արգելոց-թանգարա-
նում և, Ս. Հարությունյանի կար-
ծիքով, գալիս է VII դարից: Ղևոնդ
Ալիշանն իր «Շիրակ» աշխա-
տության մեջ նշում է ինչպես
եկեղեցիներից մեկի, այնպես էլ
շիրմաքարերի գոյության մասին:
Նա գրում է՝ «հին գեղոն Կումայ-
րի» տարածքում «ի միում ի մատ-
րանցն կամ աւանդատանց գոյր
հայ թուական «ԹՎ. ՄԵ» (756). և
ի միում տապանաքարի սակաւ
բառքս»: Ալիշանի հիշատակած
թվականը՝ ՄԵ-ն, հետաքրքրական
է ոչ միայն նրանով, որ Կումայրիի
տարածքից հայտնի առաջին (և
առայժմ միակ) թվագրումն է, այլև
նրանով, որ ավելի վաղ է ներ-
կայացնում 756 թվականը, քան
Կումայրիի մասին 774 թվականի
Ղևոնդ պատմիչի առաջին վկա-
յությունը:

Իշխան Ցիցիանովի առաջին
երևանյան արշավանքի առիթով,
երբ 1804 թ. հունիսի 12-ին ռու-
սական զորքերը տան Գյումրի,
Կումայրի գյուղաքաղաքի փոխա-
րեն հիշատակվում է Գյումրի
ամրոց-բնակավայրը: Ակնհայտ
է, որ Կումայրի անվանաձևը, դա-

րերի ընթացքում բարբառային
հնչյունական փոփոխություննե-
րի ենթարկվելով, ձևափոխվել է
Կումերի-Կումիրի-Կումրի-Գում-
րի տարբերակների: Որոշ գիտ-
նականներ էլ Կումայրի-Կումիրի
տեղանվանաձևը բխեցնում են
կիմերի-կիմեր ցեղանունից: Հարկ
է նշել, որ Կումայրի և Գյումրի
տեղանվան և անվանաձևի շուրջ
եղած բազմակարծության հարցե-
րում առկա են մի շարք հակասա-
կան, նույնիսկ անհավանական
մեկնաբանություններ:

Հայկական աղբյուրներում
Գյումրին հիշատակվում է «Գիւմ-
րի», իսկ ռուսական աղբյուրնե-
րում «Гумры»՝ Գումրի ձևերով:
Անտարակույս, օտարահունչ
«Գյումրի» անվանաձևը հայերենի
հնչյունական օրենքներին խորթ
և, բնականաբար, մերժելի ձև է:
Մի շարք գիտական ուսումնասի-
րությունների համաձայն, ճշգրիտ
է բնակավայրի Գումրի կամ Գիմ-
րի արտասանված անվանաձևը:
Հայաստանի Հանրապետության
անկախության հռչակումից հետո
Լեւոնակյանը 1990 թ. վերանվան-
վեց Կումայրի, սակայն 1991 թ.
սեպտեմբերի 21-ի «հանրաքվեի»
արդյունքում Կումայրին ստացավ
օտարահունչ «Գյումրի» անվա-
նաձևը:

Պատմական Կումայրի բնա-
կատեղին միջնադարում ևս եղել է
բավական նշանակալից մի բնա-
կավայր, և հավանական է, որ
Բագրատունիների օրոք ծառա-
յել է իբրև գորհանիստ վայր, ուր
և կառուցվել է ամրոց: Ալիշանը
նույնպես մատնաշում է, որ հին
Կումայրիի տարածքում մինչև
1800 թվականը կար «ամրոց մի
հին, նշանակ կարևորութեան
տեղւոյն»: Հետագայում, արդեն
ռուսական զինվորական իշխա-
նությունները, ի նկատի ունենա-
լով «Ставая азиатская» ամրո-
ցի բացառիկ ռազմավարական

A black and white photograph of a woman with dark hair and bangs, smiling at the camera. She is wearing a light-colored, long-sleeved button-down shirt under a dark vest. She stands in front of a rustic wooden wall. To her left is a decorative shelf with a lace front, holding a vase of white flowers and a small framed picture. To her right, a long, dark, curved object, possibly a musical instrument or a decorative piece, hangs on the wall.

Քեզ մի հեքիաթ ասե՞մ՝ քնես,
զորավորս,
քնես էլքնես՝ ցավը անցնի, ինչպես
մայրս կասեր,
երբ ծունկս քերծում էր
հող ու քարոյ,
կար, եղել է, լինում է,
կա՛ երկիր,
ասին՝ ով է բռնել,
զնա ճամփադ,
զնաց-զնաց-զնաց
փշերի կարմիր գորգն ի վեր...
անցավ յոթ սար, ծովից ծովեր,
քառսուն զազ խոր հորում
չկարողացան փակ դնել
նրա արդար կամքին,
նրա բազկի խաչին կապանք դնել
չեղավ...
հիմա՛ էլ չի լինի, ո՛չ էլ հետո...
աչքդ փակիր,
քեզ օրորեմ՝ քնես,
իմ հոգնաբեկ ճամփորդ, ազնիվ
պայքարողս,
նոր օր բացվի,
քեզ կանաչ-կարմիր
նարոտով ճամփա դնենք,
էլի՛ զնաս
դարերն ի վեր բարով...
ինչպես մայրս կասեր՝
այս գիշերն էլ կանցնի, քնիր,
զորավո՛րս,
քեզ քո մասին հեքիաթ ասե՛մ
ուրի՜շ-ուրի՜շ,
էլի բարին դու ես,
ու երեք խնձորդ երկնքից չէ՛
հողիդ ծառերից է.
որդինքս կծեն-ապրեն
այսօր, վաղը եւ միշտ
Քո լինելու մասին...

ՏԱՐԲԵՐՎՈՂ ՕՐ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԽՈՐՀՐԴՈՎ

«Կարապետ Յովսեփյան»
հիմնադրամի սահմանած գրա-
կան-հոբելյանական մրցանակա-
բաշխություն – 2025

Մեր մշակութային կյանքում
կան երախտավորներ, որոնք
իրենց գործունեությամբ, անգամ
հիշատակով կամրջում են անց-
յալն ու ներկան, առավել ևս մեզ
մոտեցնում են գալիքի դիտակետե-
րին: Այդպիսի երախտավորներից է
փիլիսոփա, գիտնական, բանաս-
տեղծ Կարապետ Յովսեփյանը:

Մայիսի 31-ին Գյումրու տեխ-
նոլոգիական կենտրոնում տեղի
ունեցավ «Կարապետ Յովսեփ-
յան» հիմնադրամի սահմանած
գրական-հոբելյանական մրցա-
նակաբաշխության 2025 թ. արդ-
յունքների ամփոփումը պոեզիայի
ժանրում: Գլխավոր մրցանակը՝
որպես մրցանակ շահած գրքի
տպագրություն, սահմանվել էր
Հայաստանի գրողների միության
Շիրակի մարզային բաժանմուն-
քի նախաձեռնությամբ և «Կարա-
պետ Յովսեփյան» հիմնադրամի
հովանավորությամբ՝ ի նպաստ

հայ գրականության զարգացման:
Գրական հանդիսությանը ներ-
կա էին հայ գիտամշակութային
կյանքի հայտնի դեմքեր՝ Կարա-
պետ Յովսեփյանի հարազատ-
ները, գիտնական ընկերները,
համախոհները, ուսանողները,
գրողներն ու գրասեր հասարա-
կությունը:

Ցերեկույթի բացման խոսքում
ՀԳՄ Շիրակի մարզային բաժան-
մունքի նախագահ Անդրանիկ
Կարապետյանը մասնավորապես
անդրադարձավ Կարապետ Յով-
սեփյանի անցած ստեղծագոր-
ծական ճանապարհին և բաժան-
մունքի կողմից՝ գրողի գեղարվես-
տական վաստակն ի մի բերելու
և գնահատելու աշխատանքնե-
րին. «Շուրջ մեկուկես տարի
առաջ ՀԳՄ Շիրակի մարզային
մասնաճյուղի գեղարվեստական
խորհուրդը որոշեց 2024թ. հռչա-
կել Գյումրի քաղաքի երախտա-
վորներից մեկի՝ փիլիսոփա գիտ-
նական, բանաստեղծ Կարապետ
Յովսեփյանի տարի:

Եվ ահա անցած տարվա
սկզբից մեր գրական կազմակեր-
պության նախաձեռնությամբ և
«Կարապետ Յովսեփյան» հիմնադ-
րամի աջակցությամբ կատարվե-
ցին հետևյալ աշխատանքները.

-«Կարապետ Յովսեփյան հա-
մախոհներ» ֆք էջի ստեղծում և
վարում:

-Կարապետ Յովսեփյանին
նվիրված ֆիլմ-էսսեի նկարահա-
նում:

-«Աշխենիկի այբուբենը» ման-
կական ժողովածուի իրատարա-
կում, նախ 300, հետո՝ 500, ապա՝
1000 օրինակ տպաքանակներով,
որոնք նվիրատվությամբ բաժան-
վել են Շիրակի մարզի և հանրա-
պետության նախկրթարաններին
ու դպրոցներին:

-«Ծաղիկներ ժամանակի ձյան
վրա» հատընտիրի կազմում և
իրատարական նախ 200, ապա՝
300 օրինակ տպաքանակներով:

-«Մարդն արարիչ» փիլիսոփա-
յական պոեմի վերահրատարա-
կում 300 օրինակ տպաքանակով:

«Կարապետ Յովսեփյան»
մրցանակաբաշխությանը կարող
են մասնակցել Շիրակի մարզում
ապրող և ստեղծագործող 31-ից
բարձր տարիքի ՀԳՄ անդամ բա-
նաստեղծներ:

Մենք հույս ունենք, որ այս
մ ր ց ա մ ա կ ա բ ա շ խ ու թ յ ու ն ը
կդառնա ամենամյա, հավանա-
բար նաև հանրապետական, ինչ-
պես «Արարատ Մկրտումյան»
մրցանակաբաշխությունն է»:

Ցերեկույթի մասնակիցներն
ուճկնդրեցին բանաստեղծ Կա-
րապետ Յովսեփյանի գործերը՝
ՀՀ վաստակավոր արտիստներ
Տիգրան Գաբրյանի, Յովհաննես
Յովհաննիսյանի, Ստորունների

թատրոնի դերասան Դավիթ Մար-
դյանի ընթերցմամբ, վայելեցին
բանաստեղծի՝ «Կուզեմ նորից»
բանաստեղծության հիման վրա
գրված երգը՝ ՀՀ ժողովրդական
արտիստ Ռաիսա Մկրտչյանի
կատարմամբ: Այս կատարումնե-
րից յուրաքանչյուրը Կարապետ
Յովսեփյանի գեղարվեստական
աշխարհի ինքնատիպ մեկնաբա-
նություն էր:

Գիտնականի մասին հուշեր
պատմեցին Սուսաննա Մկրտչյա-
նը (ՀՀ մշակույթի վաստակա-
վոր գործիչ, պրոֆեսոր, Գյում-
րու պատվավոր քաղաքացի),
Վարդան Գրիգորյանը (մանկ.
գիտ. դոկտոր, պրոֆեսոր), Սամ-
վել Ալեքսանյանը (կենսաբանա-
կան գիտ. դոկտոր, պրոֆեսոր),
Արտաշես Մկոյանը (փիլիսոփա-
յական գիտ. դոկտոր, պրոֆե-
սոր), որոնք վկայեցին նրա կեն-
սասիրությունն ու մտածողությա-
նի փիլիսոփայական խորքը:

Բանասիրական գիտություն-
ների թեկնածու, դոցենտ Կարինե
Մարտիրոսյանը հանդես եկավ Կ.
Յովսեփյանի պոեմների վերլու-
ծությամբ:

Օրվա առանցքային և հան-
դիսավոր պահը մրցանակի՝ «Կոր
գծեր» խորագրով նորահրատ
ժողովածուի («Արմավ» հրատ. ,
խմբագիր՝ Ս. Ա. Հարությունյան)
հանձնումն էր մրցանակաբաշ-

խության հաղթողին՝ բանաստեղծ
Սոնա Անտոնյանին, որին հանձն-
վեց նաև Վկայագիր ՀԳՄ Շիրակի
մարզային բաժանմունքի կողմից:

Սոնա Անտոնյանի խոսքը
հուզառատ էր և լի երախտա-
գիտությամբ: Բանաստեղծուհին
նախ շնորհակալություն հայտ-
նեց գրչակից ընկերներին բարձր
գնահատականի և վստահության
համար, ՀԳՄ Շիրակի մարզային
մասնաճյուղին նախաձեռնության
և «Կարապետ Յովսեփյան» գրա-
կան հիմնադրամին՝ հովանավո-
րության և «Կոր գծեր» գիրքը
ոգեղեն ու շոշափելի ունենալու
համար, ապա նաև՝ իր անհատա-
կանության և բանաստեղծ տե-
սակի կայացման ողջ ճանապար-
հի բացակա ու ներկա անձանց՝
ծնողներին, հայերենի և գրական
ուսուցիչներին: Հարազատներին
և ներկաներին ուղղված շնորհա-
կալության խոսքը յուրովի բա-
նաստեղծական պատում էր:

Ապա Ռոզա Յովհաննիսյանն
ընթերցեց հատված Սոնա Անտոն-
յանի «Ես քաղաքն եմ» պոեմից՝
նշելով, որ այն գեղարվեստական
կուսակումների մոր հայտնուեթ-
յուն է՝ գրված բանաստեղծական
ավանդույթի հարուստ ներուժով՝
հույզերի, մտքերի ու գաղափար-
ների ինքնօրինակ բխումով:

Ռոզա ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



Սոնա Անտոնյանի գրքի հե-
րոսը ելք փնտրող մարդն է, որ
մոլորվել և խճճվել է մոլորակի
իր իսկ հյուսած շարունակական
սարդոստայնում, որտեղ ո՛չ ու-
ղիներ կան, ո՛չ էլ ուղիղ գծեր:
Միայնակ պտտվող այս պա-
րուրածն կորուքումներում, ինչ
խոսք, միաժամանակ խորիւր-
դանշողը համընդհանուր սերն
է, որ դեգերում է երկնքից դեպի
երկիր ազատ անսահմանութ-
յան մեջ՝ վերին և ներքին բոլոր
սահմանափակումներից զերծ:
Հետևաբար, կարելի է ասել, որ
սերը գոյություն ունի նույնիսկ
այն ժամանակ, երբ ոչ ոք դա
չի ընկալում: Նրա գոյությունը
աղերսակցված է այլ համակար-
գերի հետ կանոնավոր կապով,
որի շնորհիվ սաղմնավորվում է
տեքստային մոր երկրաչափա-
կան ժամանակ: Սոնա Անտոնյա-
նը, գիտակցության բազմակար-
ծության ճանաչմանը զուգահեռ,
այս փիլիսոփայությունն իր բա-
նաստեղծություններում խմորում
է ընդհանրական, վերացական
գիտակցության հայեցակարգով:
Ընդհանուր առմամբ, կեցության
գործընթացները չեն սպառվում
այս իմանենտ փիլիսոփայության
ընկալումների որակական բո-
վանդակությամբ, այլ ներառում
են դրանց պահպանման բացար-
ձակ օրինաչափություններ, ինչը
ոչ միայն աշխարհի բանաստեղ-
ծական ընկալման ապացույցն
է, այլև համարժեք է հենց այս
բանաստեղծական և անսահման
սիրտ գոյությանը:

Սլավի-Ավիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԵՍ ՀԻՇՈՒՄ ԵՄ

Աստծո վճիտ մի առավոտ
ես արթնացա
եղրևանու բույրից
երբ լուռ պատուհանից
թունդ մայիսը լցվեց
բացեց հեղզը լուսի
բացեց փեղկը գույնի
ծայնեղ հնչյունների

ու արշավեց
ու արշավեց:

1.
Հիշեցի
Աստծո վճիտ,
անեզրական մի առավոտ,
երբ ես հարցրի՝ ինչո՞ւ
լինելիության
առեղծվածի
փնտրումներում,
և միտքս՝ բաց
ես անսացի,
լուռ անսացի
պատվիրանիդ.

Հիշի՜ր,
որ դու հիմա ծուկ ես,
հետո ջութակի լար ես
դառնալու,
իսկ հետո մասնակցելու ես
տիեզերական համանվագին.
միշտ հիշի՜ր ջութակի
լարերին՝ առանձին-առանձին
և բոլորին միասին՝
Ավե Մարիա
Ավե Մարիա երգելիս-

Հիշում եմ:

2.
Աստծո վճիտ մի առավոտ
մեր կրկնվող թափառումների,
մեր երկվության
կարուսելների
բարձր անպատմելի
բարձր երկնքին մոտ
ի՞նչ տարերքի ցնծություն էր,
իմ բաժնի մրբիրան,
քո տեղատարափ
ապրումների
սահմանային եզրին
մենք բոլորս

ՆՐԱ անունն ենք շշմջում.
հիշում ես:

3.
Հիշում եմ Աստծո
վճիտ մի առավոտ
տերևի ցուլը՝
գրկախառնության
մեր ծառերից
պոկվող
թելերը
խրձերի,
կեղևի,
ջղերում
շրջվող՝
մեր թիկունքներին
ընկնող հորիզոնի գիծը
(որտեղ մեզ ոչի՞նչն է
սպասում...)

4.
Հիշում ես, Աստծո վճիտ
մի առավոտ
մեծ ժխորում՝
մեծ քաղաքի
մեզ բաժանող,
պայմանական
նշաններից հեռու-
հիմ ձմռանկի
համբույր
խոստացար:

5.
Աստծո վճիտ մի առավոտ
հիշում եմ
դողը
իրիկնացող աշման,
քո,
իմ,
հողի:

6.
Աստծո վճիտ
մի առավոտ,
հիշում եմ քեզ
հիշում եմ ինձ,
քո խռովը
իմ խռովքից
տարբեր-
ալեկոծո՞ւմ,
թե՞ բուռն ապրում:

7.
Հիշեցի-
Աստծո վճիտ
մի առավոտ.
Ես հիշեցի
խաղաղ
քո ծայրը,
քո հնչյունը-
խզված-

Սոնա. լսում ես
այս ճերմակ
տարածության մեջ
նրանց:

8.
Աստծո վճիտ
մի առավոտ
ես հիշեցի,
որ բառերը
կարևոր չեն,
որ բառերի
շունչը առած՝
թևին տալով,
հեքով նրանց
հարկ է գնալ.
գնալ անհայտ
ափեզրերով:

Շփոթված եմ-
ես ասացի.
դու ինձ համար
անուն չունես,-
դեռ չես գտել
իմ անունը

-Լավագույնը-
ես լավագույնն եմ
քահ-քահ
ծիծաղեց
կամ էլ տխուրը:

9.
Աստծո վճիտ
մի առավոտ,
երբ հանդիպեմք
երևի թե
քո ափերը
իմ եզրերին
չհամընկնեն,
երբ հանդիպեմք,
անհույզ,
անկրակ,
կգրկեմք իրար-
պինդ-պինդ.

պլանավորված
ողջագուրամք,
երևի թե:

10.
Հիշում եմ
Աստծո վճիտ
մի առավոտ
որոշեցի քեզ
թոթափել ինձնից

դոսից ներսից
խառնակ
հազարաթով

այսպես
ապրում եմ
ներող եղիր:

11.
Ես հիշում եմ
Աստծո վճիտ
մի առավոտ.
ապրիլ
սարերից
ծյուններից
փախած ցուրտ
ապտակող
գժվելու

գժվելու
տեսարան:

12.
Աստծո վճիտ մի առավոտ
ես հիշեցի
քո բնույթը ժեռ
քո փորձը զգայական
և մտքերը խենթ
դեղին ավազներին
դեղին ավազներին
անփույթ թողած

դեղին ավազների վրա
սորում հատիկներով
ես գրեցի սահող լուսին
և սլացիկ բառեր տողեր
և գծեցի զարդագրեր.

թռչուն
կտցին ծաղկի թերթեր
օ՝ ստիխս մոր էր
փշաքաղվեց
քամու ծովի ալիքներից
օ՝ մոլորվեց

դեղին ավազներում
դեղին ավազներում:

13.
Բարկ օգոստոս
և լարային հեռախոսի
մի կողմում սիրտ
մի կողմում ձայն
և տատանումները օդի
և տատանումները սրտի
մոտեցնում էին
մեր ալիքները սփռված
մեզ

Ես հիշում եմ
Աստծո վճիտ մի առավոտ
դու ասացիր-
խոսիր ինձ հետ:

Սոնա ԱՆՏՈՆՅԱՆ



ԱՐՏԵՄ ՀԱՐՈՒԹԻՈՒՆՅԱՆ

ԵՍ ՀԱՅ ԵՄ, ԱՐՑԱԽԻՑ...

Ես Արցախից եմ, որովհետև մայրս՝ Շամիրամ Ռուբենի Զաքարյանը, Հենց նոր Արցախի սեղանին դրեց սիրելի ծաշս՝ կծեխաշը, և տաք գոլորշին ճյուղավորվելով՝ դարձավ կորսված հողերի քարտեզ, Հայ եմ, որովհետև տեսնում եմ ազգիս աղքատացումը, Սենուշկա ծախող ազնավազգեստ պառավների համբարձումը երկինք, արևածաղկի տուպրակի ետևից, և նրանց տխուր վայրեջքը քաղաքական խենթ հարվածից ծոված մայթին, կարկատած տուպրակի մեջ՝ հույսի սերմեր, իսկ խնության մեջ՝ բիբլիական բարություն: Հայ եմ, որովհետև տեսնում եմ աշխարհի ողբանոց դառնալը, իսկ հեռուստախցում քաղաքական աղբանոցը ծխում է իր լուրերի գարշահոտը, ուր պայթյունից կիսված մարմինը սոսկ կետագիծ է, էլեկտրոնային մշան, ոչ ծնող ունի, ոչ արյուն, Սոսկ կետ-գիծ, գիծ-կետ՝ ահա պատրանքը

մաֆիոզ մոգերի, որով կերակրվում ենք ամեն օր: Հայ եմ, որովհետև 14 տարեկանում կարդացի Ուիթմենի «Ողջույն աշխարհին» պոեմը, որտեղ հայերը մի օր պետք է վերջնականապես բարձրանան լյառն Արարատ՝ դնելով մաքառման եռագույնը ծյունոտ գլխին արյունոտված նահապետի, Հայ եմ, որովհետև բոլոր կրոնները անասելի դաժան են և անտարբեր ընկած հոգու խորխորատի առաջ: Հայ եմ, որովհետև բաց են դռները լոմբարդի, և սարդ կա ամեն անկյունում, ժողովուրդն այլևս ոչինչ չունի՝ թշվառության երախը փակելու, Հայ եմ՝ զարմացած, որ հայ ջահելը կարող է դիմանալ մոտեցող թշվառությանը՝ գրպանում ունենալով քսան լուծա և ատոմային ռումբի ահագնացում, Հայ եմ, որովհետև սիրում եմ այս երկիրը՝ հայրենի Արցախից մինչև Դիլիջան և Լոս Անջելեսի հայ համայնք, Հայ եմ, որովհետև պատուհանից երևացող դաշտն ու անտառը օրեցօր սրբանում են՝ հանց Արշիլ Գորկիի ցկար և տարածվում երազի քարե պատռվածքում: Եվ վերջապես հայ եմ, որովհետև հայրս՝ Շուշիից, և մայրս՝ Բիթլիսից, ինձ տվորեցրել են կրկնել Լարեկացու տողերը՝ «Եվ հիմա որտեղից գտնենք մխիթարություն անարկ վշտերի համար»:

Վերջացող ամռան ընդերքը մոխիր է, Երևանի բաց պատուհան, Ծիրանի կորիզ, փշատ, գրված թերթեր և մահվան բոթ, որ սավառնում է դատարկ սենյակում: Իսկ սկիզբը լավն էր.

Երգում էր օղը դարերի վրա, Իշխան կար նստած ամեն դեմքի խորքում, և հողը կարծր էր, անվրդով:

2000 Թ., ԴԱՐԻ ԱՎԱՐՏԸ

Տասներկու մինիստրությունների գերատանդքսից դեռ փչում է հոտը խաբեության, դառը, սոցիալական պատրանքի փայլուն թղթի մեջ փաթաթված, Տասներկու երաժիշտ նվագում են անցած դարի տանգոն, «Կոնտինենտալ» հյուրանոցի գիպսե զառամյալ արձանների ներքո, որոնց ոսկեզօծ փորի ծեփը թափվել է, երևում է ստամոքսի ժանգոտ արմատուրան՝ ժանգը որովայնի: Մեծ խանութներից բուրում է անհաջող տնտեսական ռեֆորմի քաղցրահամ դիախոտը, որ անցած դարում շարված-աշխույժ էր, բուրումնավետ-կայտառ և նվաճում էր համարվում: Անցած դարից ժառանգած ամայի թատրոնների ձմեռային այգում դանդաղ մնչում է խոցոտված պատմությունը, վաղը քնելու է մուրացկանի պես մի այլ այգում, կամ դրա մեծան ահույս մի բան, որ վարդերի հոտից չշնչել-սմբել է: Լուսնոտ մեկը ռադիոյով, աներևակայելի մեծ միկրոֆոնի առաջ փորձում է համոզել՝ միակ ընտրյալն ինքն է. և քարքարոտ հողը մռնչում է ներսում կուտակվող գազերից, Ասում է՝ Ես եմ Քրիստոսը, ձեր հոտն արածեցնողը, հարկեր կրճատողը, կաթի սեր քաշողը աղքատին փրկիչ կլիզմա անողը... Մեկ դար առաջ բռնապետին ուղղված ծափահարությունների

ծայնագրությունը ընդհատում է նրա խոսքը՝ իբր անցնող ժողովուրդը հալած յուղի տեղ ընդունեց նրա եթերային յուղից սարքած ապուրը:

ՏԱՐՈՐԻՆԱԿ Է...

1. Տարօրինակ է Կոմիկական, Բայց առաջին հարկի զաղտնի ոստիկանության նախկին գործակալ փիլիսոփա հոգեքննիչը դեռ ապրում է, նրա չոր գլխի զարկը նրանից փախչող սուքստանցի և ջեռուցման վառարանի թուջե պատին զնգում ու ձևափոխվում է մզլոտ արծազանքի՝ ահ տալով շքամուտքի բնակիչներին: Դրսում ամբոխը զննում է նոր «Մերսեդեսի» քթարմատն ու կճղակը, Իշխանության տղերքը բենզինի քսուկների վրա սուրում են նոր թեմդեր շահելու՝ ընթացքում ծախելով ժողովրդի շահերն ու պարտամուրհակը: Վերկից՝ ծյունը՝ փխրուն պատանդ, սկսում է իր գործը՝ սրբացած փողոցներից քարշ տալով մահվան մանկապարտեզ: Քաղաքը դուրս է ընկել իր շավղից: Համլետը վաճառում է հոտած պամիր՝ բանասերի հին կոստյումի տակ թաքցնելով աղաջրից կարմրավուն խեցզետին դարձած ձեռքերից մեկը, Օֆելյայի բախտը բերել է՝ նա բուժքույր է վերակենդանացման պալատում: Բանկային փողոցների ակադեմիական անդորրը խախտում է «Մակարով» ատրճանակի չորուկ հազը՝ թըրաախկ... 2. Ես դուրս եմ գալիս Երևանի պուրակների փափուկ ընդերքն համտեսելու: Ձմեռն ուշացել է, ժամանակից շուտ ծերացած մի աշուն փշվում է վաֆլիի պես գինվորական խանութից գնած ծանր կոշիկներիս տակ: Հատուկենտ մուրացկաններ ցախ են հավաքում սոցիալական ապահովության մինիստրության շենքի մոտ, դոլարից ահեղիորեն գիրացած կին մինիստրի բազեդոյան-հիվանդ գեր աչքի տակ, նրա կարմրավուն բոխախը դրոշի պես ծածանվում է աղքատին խաբող շենքի ճակատին, նա ինձ խոստացել էր ձախ լույս տալ՝ ի փառս հայ գրականության բարգավաճման, և ամերիկյան լոբի ու ձեթ՝ ի փառս հայ բանասիրության վերածման (Ձախից գալիս են քերովբեները, աջից գալիս են սերովբեները խոստումի): Երկու խոստումն էլ նա դրժեց, Ավելի շուտ գործից հանեցին մեռյալ հոգիներին՝ 18-րդ դարից մնացած բրինձ վաճառելու համար: Հիմա նա հարկային մինիստրության աստվածուհին է, մի գեր ազդրը եթե ընկնի բյուջեի նիհար ուսերին, կփշրի ողնաշարը ազգի, անաստան ուրվականներն ի վիճակի չեն կուլ տալ նրա թունավոր մթերքը և նախընտրում են չոր հացն ու պամիրը, չնայած բորբոսագույն է ամեն ինչ հիմա: Օրերի դժգույն վիճակախաղն է նստել թագին, դիպվածն է ընտրում իր պատերազմը՝ դեղին վարդի պես տարածելով իր դեղին օրերը: Բայց հոգին ծուլում է իր մեջ երկաթը. Ծնվել՝ տարօրինակ կոչումն է բոլորիս:

2001 թիվն է, Հաջորդ սերունդների համար ոչինչ չասող չնչին մի բան:

2. Ես դուրս եմ գալիս Երևանի պուրակների փափուկ ընդերքն համտեսելու: Ձմեռն ուշացել է, ժամանակից շուտ ծերացած մի աշուն փշվում է վաֆլիի պես գինվորական խանութից գնած ծանր կոշիկներիս տակ: Հատուկենտ մուրացկաններ ցախ են հավաքում սոցիալական ապահովության մինիստրության շենքի մոտ, դոլարից ահեղիորեն գիրացած կին մինիստրի բազեդոյան-հիվանդ գեր աչքի տակ, նրա կարմրավուն բոխախը դրոշի պես ծածանվում է աղքատին խաբող շենքի ճակատին, նա ինձ խոստացել էր ձախ լույս տալ՝ ի փառս հայ գրականության բարգավաճման, և ամերիկյան լոբի ու ձեթ՝ ի փառս հայ բանասիրության վերածման (Ձախից գալիս են քերովբեները, աջից գալիս են սերովբեները խոստումի): Երկու խոստումն էլ նա դրժեց, Ավելի շուտ գործից հանեցին մեռյալ հոգիներին՝ 18-րդ դարից մնացած բրինձ վաճառելու համար: Հիմա նա հարկային մինիստրության աստվածուհին է, մի գեր ազդրը եթե ընկնի բյուջեի նիհար ուսերին, կփշրի ողնաշարը ազգի, անաստան ուրվականներն ի վիճակի չեն կուլ տալ նրա թունավոր մթերքը և նախընտրում են չոր հացն ու պամիրը, չնայած բորբոսագույն է ամեն ինչ հիմա: Օրերի դժգույն վիճակախաղն է նստել թագին, դիպվածն է ընտրում իր պատերազմը՝ դեղին վարդի պես տարածելով իր դեղին օրերը: Բայց հոգին ծուլում է իր մեջ երկաթը. Ծնվել՝ տարօրինակ կոչումն է բոլորիս:

«ԻՆՔՆԱՍԱՔՐՄԱՆ ԽՈՐԱՆՆ Է ՃԱՆԱԴԱՐԸ ԲԱՌԻ» (Ռոբերտ Եսայան, Արյան համաստեղություն, Եր., 2025 թ.)



«...Բակ ինքնությունն ընդհանուր խառն աստիճանի հարկը, Բարձրանում է վեր՝ միավորելով ոգին փրկության»:

Ռ. Եսայան

Գուցե եղած-ներսում եռացող խոսքերի և խոհերի անսահման օվկիանից գրողի նախընտրած միակ ելքը լռությունն է, որ հիմա հորդում է գրքի տեսքով, գուցե և անկասելի ձգտումն է դեպի լույսը, բայց անհերքելի է, որ այս ժողովածուն «չասված խոսքի շնչառությամբ» նրա վերելքն է՝ ամուր կառչած արմատներին: Խոհերը բառ-ազատատենչ թռչնակից սահուն անցնում են գրողի մեծագույն ապրումին՝ Հայրենիքին: «...Փաթաթվում են երկինքներով հայրենաբաղձ իմ հավերթի, // և բարձրանում ինքս ինձնից, ինչպես բառը՝ աղոթողից»: Սա նաև անցումն է ընդհանուրից մասնավորին՝ իրադարձություններ, որ մեծ աշխարհի անկասելի երթի հենքին են թանձրանում: Նրա՝ բառի, ինքնորոնման, հիշողության և խոհի փնտրտուքն անպայմանորեն անցնում է հայրենի կարոտ երախով՝ ճիշտ և ճիշտ համահունչ անցած ուղուն: Եվ երիցս ճշմարիտ է շարքի խորագիրը, թե՛ «Ազատ հոգին երազով գերակա է տակավին»: Արցախ, Շուշի, և միանգամից առնչակցումը՝ «հավատից

ընկնում է մի խաչ հուշերի արյունոտ ձորում», բայց և զուգահեռ՝ «հավատից հնչում են երգեր, հառնում են խոյակ ու կամար»: Ասել է՝ եթե անգամ նրա երազը բաց վերք է, միևնույնն է, հույսը չի մեռնում, որովհետև հար և միշտ «հրեշտակները երկիր են գալիս Արևի կառքով»: Արցախը՝ որպես սեր, որպես ապրում ու հավատ, որպես երկխոսության ակունք՝ բանաստեղծի և իր միջև: «Քո լույսը հող է և ունի կշիռ, // և քո անձրևը աստղատարափ է, // երկունքիդ լույսից այնպես երակվիր, // որ քո անցյալն ու գալիքը արբեն»:

Հայրենի հողը, ձգտումը լույսին և բառը անենակարող. գրողն ինքն է խոստովանում է. «Բառ փնտրելով, գտնում եմ դուռ, // հոգու լույս ու ազատություն, // բողբոջներս բաց երկինք են աղոթողի...»: Ահա նրա տողերի հենքի թելերը, որ ոչ մի ակնթարթ չեն կորցնում պիրկ ոգին. չեն թուլանում երբևիցե, և տենչում է մարդը քառսի մեջ լույս, թե՛ «ցավի լույսով ե՛րգ եմ արարում»: Սա ակունքն է մղումի, բառի երկունքի տողը, ցավի արտահայտումը

բանաստեղծորեն ու մարդկայնորեն, և գրողի ինքնությունը, որ ի վերջո բանաձևվում է՝ ներքին և արտաքին անընդմեջ պայքարի արդյունք որպես. «...լույսի բառերով կապույտ աղոթք է իմ ինքնությունը»: Եվ կրկին. «Գուցե արյունս ուխտատեղի է // երազի համար և թռչունների»:

Ընթերցողը ևս ականա անցնում է հար և նույն ճանապարհը՝ հեքիաթի թևով, երազի բառով թե հիշողության. գրքում բոլոր տողերը և կառույցները պատկերավոր մտածողության անժխտելի պտուղներն են: Եվ մայրերգություն,ու կարոտ այլևս անվերադարձ մանկության. «...մորս ձեռքն է համբուրում լուսալքը և տարածվո՞ւմ, // սլանում է երկինքը կարոտներիս թևի տակ»: «Մայրս երգ է մրմնջացող, ժպիտ՝ հույսի կոպերով» խոսում տողով, որ իր տրամաբանական շարունակությունն է ստանում արդեն հաջորդ՝ «Հիշողության ասուպներ» շարքում: Եվ գուցե թե բավարար կլինի ընդամենը մեկ պատկեր՝ ներկայացնելու տողը հեղինակի տաք հուզապարտմի. «...Երբ հենվում էր հայրս

մտքին, // ինչպես՝ բառին, // իսկ թևերը քշտած մայրս՝ // լուռ խոնարհված իր տաշտածն // օրվա վրա, // լվանում էր // իմ խաղերը փռեթաթախ // և հոգսերը իր տնակյաց, // կամ երփներանգ հանդարտությամբ // ճնշում էր մի հին մտածումը», «Հորս ճակատին՝ երազի սահանք, // Աչքերում՝ հաստատ վճիռ կայծակի, // Նստում է քարին, քարը խորհո՞ւմ է, // ձեռքի անհամբեր ու տաք ճաքերում // երկար մնում է ճիչը սերմերի, // երկինքը կոպն է, բխի՜ճը՝ բիբն աչքի, // հոգսը՝ մշտական աղոթատեղին»:

Ապա թե՛ «...Իմ կարոտն է դեռ երգում // շնչառությամբ նմներին...», և երազ առ երազ արթնացող մանկության հուշեր, իսկ արդյունքում սահուն ու անխոչընդոտ ապահովվում է անցումը՝ կապը գրողի ու սեփական մանկության և հորիզոնը ճեղքող՝ դեռ անթագ արքա մի պատանու և... գրողի միջև. միանում են բոլոր ժամանակները մեկ ժամանակի մեջ՝ այսօրվա: Ամենակարևորը՝ «Խոսում եմ, // և բառերը ստանում են // ձայն և տարածություն»: Այնժամ հյուսվում է մանկության

կապույտ երազ հեքիաթը, «Ծխախոտի միջից // ներքաշեցի օրը // շիկացնելով հուշը օղակ-օղակ, // և հպեցի դեմքս ափիս մասունք-հողին, // որպես խղճի կնիք // ու փրկօղակ»։ Իսկ ամփոփումը. «Կյանքիս // ու երագիս վրա դողում է // ճակատագրի ձեռքը՝ կորցնելով // բաժանարար գիծը...»։

Հետո ցավն է հուշերի. «Հուշերիս պատերը ճանկռտում են քամիներն, ինչպես կատունը...»։ Եվ էլ ինչ մանկություն, ինչ տուն ու ճակատագիր՝ առանց Արցախ աշխարհի, ամուսնի, որ մշտակա է գրողի տողերում. «Արցախը սկսվում է // ճառագայթներից... // Հորս վերնաշապիկը // ճառագայթից կախված // հորիզոն է»։

Հայրենի տան, մանկության հուշերի շարքը, ի դեպ, ամբողջացվել է շուրջ չորս և ավելի

տասնամյակների ընթացքում, սակայն նշված փաստը միայն թվագրությամբ է արտահայտվում, իսկ բանաստեղծությունները միասին պոեմի արժեք ունեն ներքին կապի շնորհիվ, և տարիների ընդհատումի մասին խոսք լինել չի կարող։

...«Մի՛ շարժվիր. // իմ և քո շուրթերի միացման կետում // թռչնի բույն է հյուսվում». սեր կամ «Շշուկների երկինք» շարքը՝ «Ուզեցի բացել քեզ. // դու փակվեցիր, // ինչպես առեղծվածի վերք»՝ «Հավերժի բանալիով»։

Խոհի և փիլիսոփայության հիմքը «Ճակատագիր երկու ափերի միջև» շարքն է, և առանցքում մարդն է՝ հայացքն անսահման տարողունակ իրականությանը՝ մեկիկ-մեկիկ և ամբողջական ընդգրկումով, և ըստ այդմ էլ՝ գրողի հայացքի ներքո տրոփում

է իրականության և, անշուշտ, մարդու հետ կապված ամեն ինչ։ Ինքնատիպ այդ մեկնակետին հեղինակը հասնում է քայլ առ քայլ. «...ես ապրում եմ, // թե՞ պարզապես հող եմ ցանում // բաց բիբերին տառապանքի», ապա՝ «Արդեն ճակատագրի միջանցքում եմ. // իմ միջով մտնում եմ // աղոթատեղի, // և բառերի միջև զորանում է // ազատությունս», վկայում է հեղինակը։


Ուշագրավ է ժողովածուն ամփոփող՝ «Արյան համաստեղություն» պոեմը՝ բաղկացած երեք մասից՝ «Ինքնության անդրադարձներ», «Կյանքը շրջանակից դուրս», «Երազը դուռն է ժամանակի»։ Սա հատվածական մի մղումով ասես դնում է ասելիքն ամբողջացնող վրձնահարվածները՝ սրտի դուռը բախող արյան ընդհատ-ընդհատ մղումի

պես։ Սա երկարաշունչ բանաձևի բերված՝ գրողի մտածողության ամբողջական ուղեծիրն է՝ ներսից դուրս և երկնքից երկինք, թե՛ «ես ինձ չեմ շրջանցում։ Ես ինձ հաղթահարում եմ արյան կաթիլներով, որոնք որոնող աչքերն են իմ ճանապարհի», ապա և շարունակում. «Իմ մենությունը պատահողն է։ Ես իմ հիշողության երևացող մասն եմ։ Իմ և իմ միջև սավառնում են հանգրվանները տիեզերքի։ ... Ես առնչվում եմ տիեզերքի ելքին... Ես իմ ժամանակն եմ»։

«Ե՛տ տար տողը // կափարիչը քառսի, և կտեսնես // ինչպես է ծնվում ճանապարհը...»։ Մի կողմից՝ գրողի երկարունիզ ճանապարհի նպատակակետը, հարկավ, ներդաշնակությունն է, որ երևում է որպես վրձնահարված՝ ոգու կտավին։ Ինչ խոսք, լույսի

թռիչքից ներշնչվող հեղինակին տրվել է ներքին դաշնը։ Մյուս կողմից՝ մեր օրերի շունչն է որպես հևք ամենուր՝ տողատակում թե՛ անթաքույց, հայի ճակատի գրից մինչև մեծ և փոքր տերությունների՝ հոգևոր ու նյութական մրցավազք։ Եվ իբրև բոլոր տեսակի տարակույսների ամփոփում՝ Նժդեհին ձուլված քառատողն է և մոխրացած պատմության վերածնունդը. ինչ էլ որ լինի, Արցախից մինչև ԱՄՆ, Շուշիից մինչև Գյումրի և մեծ հաշվով՝ Հայաստան, գծվում և վերագծվում է հույսը՝ հավատի, վերածննդի, հարուսյան, ոգու ուժի և հաղթության մեկնակետերով, և ապրված տառապանքից լույս է ծնվում, լույս՝ երանելի ու սպասված։

Կարինե ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Բան. գիտ. թեկնածու, դոցենտ



ԽՈՍԵԻ ԺՈՂՈՎՐԴՅԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԸՍՏ ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ «ՀԱՄԲԵՐԱՆԻ ԶԻԲՈՒՄԸ» ՊԱՏՄԱՍԹԵԻ ԼԵՁՎԻ

Ավ. Իսահակյանի բազմաշերտ ու բազմախորհուրդ, այլև բազմաժանր գրական ժառանգությունը ենթադրում է համապատասխան դրսևորումներ նաև լեզվական առումով։ Վարպետի լեզուն անսպառելի գանձարան է և մշտապես հետաքրքիր ուսումնասիրողների համար։

«Համբերանքի չիբուխը» պատմվածքի լեզուն բնութագրվում է ազգային ավանդական մտածողության ջիւնը ու կենսունակ անմիջականությամբ, կենդանի հմայքով ու բնականությամբ։ Այն ժողովրդական մանկավարժի Օհան-ամու լեզվամտածողությունն է։ Իսկ թե ով է Օհան-ամին, դիմենք իր հերոսների մեջ մշտապես հանդես եկող հեղինակին. «Պատանի երևակայությանս համար երևում էր լուրջ, մենակյաց Օհան-ամին, իբրև նահապետական դարերի մի իմաստուն, որ վաթսուն տարիների գազաթից նայում է աշխարհին, միտք է անում աշխարհի բանը՝ ծխելով իր համբերանքի չիբուխը»։

Հասկանալի է, որ Օհան-ամին՝ ժողովրդի նահապետը, ներկայացնում է ժողովրդի լեզվամտածողությունը՝ սերունդների կապով. «Իմ թարմ զգայության վրա խորհրդավոր տպավորություն էր թողնում նրա անցրած ու ապրած կյանքը և իր ապրումներից գուժարած մտքերը»։

Պատմվածքի բանալին Օհան-ամու կերպարն է՝ «գունա-

րած մտքերի» լեզվական արտահայտություններով։

Այսպիսով, պատմվածքի գեղարվեստական արժեքը նրա լեզվի ժողովրդայնությունն է։ Իսկ դա նշանակում է ժողովրդի անցած դարավոր ճանապարհի ընթացքը, փորձն ու իմաստությունը, «հոգին ու հոգեբանությունը», մարդու կատարելության մասին պատկերացումներն ու երազանքը, հավատը, համբերանքը /թեկուզ չիբուխը ծխելով/։ Եվ այդ ամենը ժողովրդի բառ ու բանի՝ առաժառանգություններ, ասացվածքներ, ժողովրդական իմաստություններ, խոսքային բանաձևեր /անեծք, օրհնանք, խրատ/, համառոտ առակներ, իհարկե, նաև երգեր, գործածությամբ։

Օհան-ամու /այն է՝ ժողովրդի/ վերաբերմունքը կյանքի հանդեպ բխում է այն գիտակցությունից, որ «մարդը կերթա, աշխարքը կմնա», ուրեմն աշխարհում ինչ-որ բան թողնելու ձգտումն է առաջնորդելու մարդուն։ Սա է Օհան-ամու իղեալը, և այդ հոգեբանությանը համապատասխանող ժողովրդական մտածողության միջոցներով է գրողն ամբողջացրել նրա կերպարը։ Նա գիտի, որ «աշխարհից բան տանող չի եղել, բայց մենակ թե՛ մարդս էս աշխարքն եկել է աշխատանքի համար», «Ձեռքս՝ բան, ոտքս՝ գերեզման»։ Նա կնոջ հեռտորական հարցին՝ «Ի՞նչ պիտի տանի աշխարքեն», պատասխանում է՝

հաստատելով իր իղեալը. «Իմ հացս իմ քրտինքովս պիտի ուտեմ»։

Կենսափիլիսոփայությունը ներկայացվում է դիպուկ իմաստախոսությունների, պատրաստի խոսքերի գործածություններով, որոնցով հեղինակը կատարում է կարևոր ընդհանրացումներ, ինչպես. - Եսպես, բանտ ըսածը մեկ հավաք աշխարք է։ Մենակ էն զանազանությունը կա, որ աշխարքում չբռնված գողերն ու արունքտերերն են ապրում, իսկ բանտի մեջ՝ բռնված գողերն ու արունքտերերը»։ Սահմանումի նման է հնչում։ Իմաստուն այս արտահայտություններն ազդում են մարդու մտքի, զգացմունքների վրա, գիտելիք ու փորձ են հաղորդում նրան։ Այդպիսի արժեք ունեն նաև ստորև բերվող իմաստուն մտքերը, որոնցով հեղինակն ընդհանրացումներ է կատարել. «Ամեն, ամեն գեշ բաների պատճառն իմ ու քունն է», «Ու քանի որ փողը կա, մարդ չկա, քանի իմ ու քու կա, սեր ու խիղճ չկա», «Թուրքը կըսե. - «Կռիվըն ուրտեղի՞ց է։ - Մեկը կուտե, մեկը կաշե»։ - Կռիվն էղտեղից է»։

Պատմվածքի գաղափարն ու գրողի իղեալը նույնպես ժողովրդի լեզվամտածողության այս միջոցով են արտահայտված. «-Մարդը գնացական է, նրա լավ գործը՝ մնացական, ըսել է ինքն է մնացական»։ «Առանց լավ մարդու աշխարքը շա՛տ դառն է՝ օձի լեղի...»։

Կարճ ու բնական խոսքն ընդհանրապես հատուկ է բանավոր ստեղծագործություններին, որտեղ իմաստախոսում է ժողովուրդը. այդ խոսքը տպավորիչ է, երկար է ապրում, ազդու է, ինչպես՝ «Ազահ մարդու փորը կոնա կուշտ ըլնի, բայց աչքը միշտ անոթի կըլնի»։

Օհան-ամին ժողովրդի պատկերացումները, վարքի ըմբռնումն է ներկայացնում, հետևաբար բանաձևի արժեք ունեցող պատրաստի խոսքերն այս հանգամանքներում անփոխարինելի են։ Խոսքը զորեղացնում են նաև կայուն կապակցությունները, դիպուկ դարձվածքները, օրինակ. «Մենակ մարդն ի՞նչ կարող է անել աշխարքի սարքի դեմ... Գեղ պիտի կանգնի, որ գերան կոտրի»։

«Աշխարքի սարքի դեմ» Օհան-ամին մենակ է մնացել։ Սա է աշխարքի կարգը։ Հայտնի է դարձվածքների դերը ազգային լեզվամտածողությունն արտահայտելու գործում։ Ժողովրդի հոգեբանությունն ու կենսափիլիսոփայությունն ամփոփող այս սեղմ միջոց ոչ միայն բովանդակային, այլև ոճատեղծ նշանակությամբ վարպետորեն է գործածել գրողը՝ հաճախ միայն այդ գործածություններով կերտելով իրադարձությունների պատկերներ, ինչպես նաև տիպական կերպարներ։ Այսպես. բավական է կողք կողքի դնել Օհան-ամու և ընկերների ըմբռնացման դրվագում գործածված դարձվածքները, և անվրեպ կներկայացվի իրադարձությունը։ Բերենք օրինակը. Պրիստավը... «ոտները գետնին զարկեց» /սաստիկ բարկանալ/, «քաշեց նրանց մտրակի տակ» /մտրակով ծեծել/, «Արյունը կոխեց Օհանի աչքը» /զայրույթից ինքն իրեն կորցնել/, «Ծեծվողները թև առան... /ոգևորվել/ հարձակվեցին յասավուների վրա», որից հետո՝ «Հորս ընկերն էլ եկան, վզները դրին հարուստների շեմին, ներում ստացան», բայց Օհանը մերժեց հարուստների պատգամը՝ - «թողություն ստանալ»։ «Եվ այսպես «աշխարհաթող» եղավ Օհան-ամին», որովհետև «չուզեց տեսնել իր դավաճան, փոքրոգի ընկերների երեսն աճգամ»։

Մխոյի կերպարն անհատականացնելու հարցում բնորոշ բաների հետ ոճական միասնության մի Իսահակյանը գործածել է իմաստային նույն դաշտին պատկանող դարձվածքներ, որոնցով բնականություն, կենդանություն է հաղորդել խոսքին, ահա. «Խելառնունջի մեկն է... խելառ-խելառ»։ Խոսում էր անկապ, տակից-վրայից, սարից-ծորից»։ Կամ

Միրզա Մեհդիին Օհանը հիշում է ամենօրյա նրա երգով. «... Քրտինքովը կերած հացը Սուլթանների ճաշից լավ է...», նաև «Իմ ու քու չունեիր», «...Իմաստուն մարդ էր, խելքի ծով», «... Կըսեր. - Քաշենք համբերանքի չիբուխը, մինչև ազատության դուռը բացվի»։ Բաթո աղայի մասին ասում է. «-Գռող-գռողի մեկն էր, աղքատի շապիկը հանող...», նաև «Տեղովը որ արևա-րեգակ ըլներ էդ Բաթո աղեն, էլի մեկ մարդու չէր կրնա տաքցնե»։ Ժողովրդական խոսքի կենդանի մթնոլորտ է, որն ավարտվում է դարձյալ այդ միջավայրին բնորոշ հեզմանքով. «Ողորմի՛ կողքի մեռելներին»։

Ն կ ա ր ա գ ր ու թ յ ու ն ն ե ր ը , փաստերի ներկայացումները չեն թողնի այն տպավորությունը, ինչ փոխաբերությամբ օժտված պատրաստի խոսքերը։ Մխոն և՛ գյուղում է լինում, և՛ ջրաղացում. ժողովուրդն այս դեպքի համար պատրաստի խոսք ունի, որը հեղինակը մեջ է բերում լեզվի ինքնընթացության օրենքով. «Մխոն ապրում էր Օհան-ամու հետ, թեև նրա մի ոտը ջրաղացումն էր, մյուս ոտը՝ գյուղում»։ Այսպես նաև Օհան-ամին բացահայտում է Մխոյի «ուրախսիրտ» լինելու պատճառը. «Աշխարքն իրան վրա ծախես, մեկ կոպեկի չի առնի»։ Օհան-ամին փիլիսոփայում է, խրատում. «Ուրախությունը բախտավորության կեսն է»։

Կարելի է կազմել պատմվածքի խրատանին, որով խոհականություն է հաղորդվում խոսքին. «Ես սիաթը մեր ձեռքն է՝ ուրախ ըլնիք, մեկ էլ սիաթի տերը մենք չենք, կարելի է կանք, կարելի է չկանք»։ Ժողովրդական բառ ու բանի այս միջոցներով լեզուն օժտվում է անկեղծությամբ, ժողովրդային հուզականությամբ։ Այդպես էլ Օհան-ամին իր մասին ասում է. «Ես իմ մասին, հաշիվս խտկել եմ աշխարքի հետ»։

Օհան-ամին ներկայացնում է ժողովրդի դարավոր իմաստությունը Իսահակյանի գործածած «կյուրիտային դարձվածքների, ժողովրդի հոգուն հարազատ՝ կենդանի, հակիրճ ու դիպուկ արտահայտությունների» միջոցով։ Այսպես՝ /Օհան-ամին/... միտք է անում աշխարհի բանը՝ ծխելով իր «համբերանքի չիբուխը», նաև «...Աշխարքը են գլխից համբերություն է եղել ու կա», «Բանտի մեջ հասկացա բանի ուղն ու ծուծը»։

Այդպիսին են նաև հատուկ հայ ժողովրդի լեզվամտածողությանը բնորոշ ձևերի կիրառությունները, ինչպես՝ «Ես օր-ծերությանը

դադար չունի, մեկ գլուխ կդատի ու կաշխատի», կամ՝ «Մենակ փափախա տարավ, էն տանելն է, որ տարավ...» արտաքուստ ստորադասական այս կառույցն այլ իմաստ է արտահայտում՝ անդարձ տարավ. այն հատուկ ձև է և բնորոշ է հայ մարդու մտածողությանը:

Յուրաքանչյուրիս հոգեհարազատ են բերվող զրույցները, երգերը, հիշողությունները՝ ածամի հող եկած մարդու, Միրզա Մեհդիի, Սարգիսի, Նոյ մահապետի պարտապանի մասին, որոնք գործածված փոխաբերական պատկերներով, բառապաշարով, քերականական ձևերով, դարձվածքներով հզորացնում են խոսքը, ազդում զգացմունքների և մտքերի վրա: Այսպես առաջացել են նաև բանաձևի արժեք ունեցող արտահայտություններ՝ համբերանքի չիրուխ, աշխարհաթող լինել, Նոյի պարտապան: Ի դեպ՝ աշխարհը թողնել դարձվածքը չունի Իսահակյանի աշխարհաթող լինել դարձվածքի իմաստը: Բառարանում աշխարհից հրաժարվելու, վաճառ մտնելու, կրոնավոր դառնալու իմաստներն են նշված:

Պատմվածքի լեզուն այնքան բնական է, անմիջական ու ինքնաբերական, որ թվում է, թե ժողովրդական զրույց է և ոչ թե անհատ հեղինակի ստեղծագործություն: Այդ ամենը պայմանավորված է համապատասխան լեզվամիջոցների ճիշտ ընտրությամբ: Այսպես, խոսքին շարժունություն են հաղորդում հարադիր բայերը, որոնք անկաշկանդորեն է գործածել Իսահակյանը: Նրանց մեջ կան նաև դարձվածային արժեք

ուներգողներ, նաև Շիրակի խոսվածքին հատուկ օտար բաղադրիչով կազմվածներ, ինչպես՝ դաշաղ ընկնել, խորաթա էնել. «- Չէ, քեռի ջան, զնացել ճամփու վրեն կայնել էի էկող-էրթացողի հետ մե քիչ խորաթա էնելու»:

Եվ ազատ հարադիր բայերը, և՛ բայական դարձվածքները «կարևոր են ոչ միայն իբրև լեզվական շինանյութ, այլև որպես մտքի արտահայտման ազգային ձևեր»: Ահա խոսում օրինակներ. «- Է՛է՛է՛, ծերացանք, ըսել է՝ եկանք հասանք ծերին: Ամեն բանի ծերին, կյանքի ծերին, աշխրթի ծերին...»: Փոխաբերականությունը հուզական ուժեղ ազդեցություն է թողնում, որը մեծանում է շարունակության մեջ. «Մեկ խնդրանք ունիմ- քանի ողջ եմ, ոտ ու ձեռով մնամ, գետնին գերի չըլնիմ...», կամ «Ես էլ կամաց-կամաց ճամփա կիստկեն դպա հորս քովը»: Ընդգծվածն ազգային մտածողություն է միայն հայ մարդու համար բոլոր նրբիմաստներով հասկանալի:

Լեզվին ժողովրդայնություն են հաղորդում նաև հուզաբարտահայտչական միջոցները՝ տարբեր զգացմունքներ և վերաբերմունք արտահայտող հնչերանգ, ծայրանարկություններ, զնահատողական պատրաստի խոսքեր, օրհնանքներ, բարեմաղթանքներ և այլն. «Չէ՛, ջանըմ, մեջքիս ցավը հա մոր չէ՞», «-Ես չուն է. հալա մեկ ասա՝ շուո՛ւմ: Ես մարդ արարած չե՛...», «-Խմե՛, աղախպորս տղա, խմե, որ ուրախանանք», կամ «Գալո բարի աղախպորս տղա», շատ բնորոշ է /նաև կոչականի առկայությամբ/. «-Է՛յ գիտի, Միրզա Մեհդի, ականջդ կանչե՛ թե որ

ողջ ես. թե եմ է պառկել ես հողի տակ, տղեքդ ողջ ըլնեն...», նաև՝ «Դեհ, էս չայ-շաքարն առ, սեղան բաց...»:

Չաճախ հեղինակի խոսքում ևս գործածվում են ժողովրդական լեզվամտածողության միջոցներ անկաշկանդ մթնոլորտ ստեղծելու միտումով: Այս առումով հետաքրքիր են դիմման ձևերը: Բերենք բնագրում. «Ինձ տեսնելով՝ մոտեցավ Օհան-ամու պառավը, որ եկել էր ամուսնուն այցի», կամ «-Կնիկ, հերիք փնթփնթա...»: Հասկանալի է, որ այսօրվա ձևերով չէին դիմելու միմյանց, սակայն չեն հնչեցնում նաև ամուսնուհի: Օհան-ամու կինն ասում է. «-Ես՝ չէ, թող աղեն ըսե, հայը էսօր քե՛ք չունի...»:

Չեղինակն անվերապա գիտի իր հերոսների հոգեբանությունը և լեզվամտածողությունը. իրականության մեջ գրիտ պատկերներ կերտել է համապատասխան լեզվամիջոցներով: Այս առումով շատ մեծ է տեղին գործածված բառերի դերը: Բներանգ ապահովելու հարցում դարձվածքներին չեն գիշերում տվյալ միջավայրի համար խիստ բնորոշ, իրենց նրբերանգով հասկանալի բառերը, ինչպես՝ խելառշունչ /Մխոմ/, արունքտեր. «...Աշխարհում չբռնված գողերն ու արունքտերներն են ապրում...»: Այդպիսին է աշխարհաթող լինելը, որը չի գործածվում իր բառարանային իմաստով և պատմվածքի գաղափարի և հերոսի հոգեբանության բացահայտման առումով առանցքային դեր ունի. այն բնութագրում է անարդարությունների, դավաճանության այն բեռը, որ ստիպել է Օհան-ամուն մեկու-

սանալ, չապավինել մարդկանց, մահից հետո էլ «չվերադառնալ» նրանց մոտ:

Բովանդակային-ոճական նշանակությամբ օժտված բառեր և արտահայտություններ հաճախեց են հանդիպում, որոնցով Իսահակյանն ապահովել է ժողովրդական կենդանի լեզվի բնորոշ մթնոլորտը, ինչպես՝ «Էնքան մարդ կա-ամուսնու, անհող, ետն-յալ աղքատ...», կամ «...Ես գլխեն ինչ տալացուք ունենք տխուր ըլնելու»: Հակիրճ, ազդու է խոսքը, բառերը՝ տարողունակ: Այդպիսի բառերով հմտությամբ կերտված են խոսում պատկեր-կերպարներ, այսպես՝ «Օհան-ամին կորաքամակ էր արդեն...», տեսանելի, տպավորիչ պատկերներ՝ «...Օհան-ամու ծերունի ընկերները գյուղից գյուղ ցուպերը շավիղների քարերին ծեծելով, «...թմթալով, կորամեջք ու տնքտնքալով գալիս էին ջաղաց...»:

Իսահակյանը մեծ վարպետությամբ կիրառել է բազմիմաստ բառերը ժողովրդական նշանակությամբ՝ ստեղծելով շիրակցի մարդուն միանգամայն հարազատ լեզվական մթնոլորտ, ինչպես՝ հասնել բայը չափահաս դառնալու իմաստով. «...Որդիները հասել էին արդեն...», կամ «...Ինքն էլ ամուսնացել Սև որդիներ հասցրել...»:

Այդպիսի արժեք ունի նաև շահել բայը խնամել, հոգ տանել իմաստով գործածելը. «Թող տուն գա, առեք-փառք ապրի, ջարդվելիք հարսներն ինչի՞ համար են, թող շահեն»: Ջարդվելիք բառը նույնպես վերաբերմունք է դրսևորում՝ որոշակի բացասական երանգով՝ ժողովրդական մտածողությամբ հատուկ

փոխաբերական իմաստները ժողովրդայնություն հաղորդելու իմաստով շատ կարևոր են, ինչպես՝ «Շա՛տ տեսակի մարդիկ կային բանտը- եփված, աշխարհատես»: Եթե կյանքի փորձառություններ տեսածով փոխառինենք, խոսքի հմայքը կկորչի: Բառը խոսքը դարձրել է հակիրճ, պատկերավոր, ժողովրդին հարազատ: Թվում է՝ աշխարհատես բառի փոխարեն աշխարհ տեսած դարձվածքը պիտի գործածված լիներ: Սակայն այս բարդ բառը ոչ միայն ավելի պատկերավոր է, այլև թարմ: Ի դեպ, Իսահակյանի պատկերավոր մտածողությամբ շատ բնորոշ է բարդ բառերի պատկերավորությամբ դիմելը: Այս պատմվածքի լեզվում էլ կան այդպիսիք և ունեն ընդգծված ժողովրդական երանգավորում: Օհան-ամու և ծերունի ընկերների ժամանակները բնութագրվում են պարզսիրտ ու միամիտ. անչար բովանդակությունը նաև հուզականությամբ է բնութագրվում: Այդպես է նաև ուրախսիրտ բառի արժեքը. «Մխոմ էնքան ուրախսիրտ է...», որովհետև շահ չի որոնում: Այդպես էլ «խելառշունչ» Մխոմ «խնդուններես նայում է Օհան-ամու կողմը»: Փորձենք փոխարինել խնդուններես բառը: Խնդուն-ի փոխարեն ուրիշ ոչ մի բառ ժողովրդի ընկալած նշանակությունը չի ունենա. խոսքի ներգործությունը կապակասի, ժողովրդական երանգը կկորչի: Այս ամենը վարպետը գործածել է բովանդակային-ոճական միասնության մեջ:

Մարիետա ԽԱՉԱՏՐՅԱՆ
Բան. գիտ. թեկնածու, դոցենտ



ՀԱՅԿ ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆ

Տերեկվա շոգը, որ միախառնվել էր առջևում գտնվող մարտական մեքենաներից արտանետվող գոլորշիներին, ուշքի բերեց մեզ: Բեռնախցիկով մեքենան, որ նախկինում սնունդ էր տեղափոխում, և որի մեջ այժմ մենք էինք գտնվում, շարժվում էր արագ ու հավասարաչափ՝ հետ չճնալով մեզինից մոտ քսան մետր հեռավորության վրա գտնվող մեքենայից: Իմ ողջ ուշադրությունը կենտրոնացած էր ժայռերի վրա, որոնք իրենց գագաթներով համգչուն էին մեր սրտի սահմաններին: Լեռների ստորոտով ձգվող ճանապարհը պարզ երևում էր գագաթներից, և այժմ թշնամին հեշտությամբ կարող էր կրակել մեքենաների վրա ականանետներից, նռնականետներից և գնդացիներից: Հետևաբար ես ուշադիր նայեցի յուրաքանչյուր լանջին, հսկայական քարերի մեջ, որոնց հետևում կարող էին լինել թշնամու դարանները: Ենթագիտակցորեն մշակված իրավիճակներ կային, որոնք կարող էին առաջանալ հարձակման յուրաքանչյուր վայրկյանին: Եթե սարե-

րից կրակ բացվի մեզ վրա, ապա անձնակազմը պետք է ցատկի մեքենայից կրակի հակառակ ուղղությամբ, որպեսզի թաքնվի փամփուռների ու բեկորների մրրիկից: Բայց չեն հասկանում ինչի համար նրանք կցանկանան երկրորդ անգամ սպանել մեզ:

Հանկարծ նկատեցի՝ երկու զինվոր նստած են հենց ճանապարհին: Նրանք այնքան էին հոգնել քայլելուց, գլուխները խոնարհել էին, թվում էր՝ խոսում էին ինչ-որ բանի մասին, տիեզերքի մասին, որը միայն նրանց է պատկանում: Սա նրանց աշխարհն է, որի մեջ օտարը դժվար է մտնում. – գոյություն ունեն ֆիզիկայի և մեխանիկայի իրենց օրենքները: Ինչ-որ անհայտ ցանկությամբ այս փակ խոսակցությունը միշտ կմնա միայն այս երկուսի համար: Բայց այս գույգից բառացիորեն տասը մետր հեռավորության վրա մի մարդ քայլում է դեպի նրանց կողմը, քայլում է վստահ քայլերով, դեմքին երևում են պայքարի ու կասկածի նշաններ, վախ ու հույս: Երրորդը նրանց է մոտենում հորիզոնից ու սառչում: Թվում է՝ նա պարզապես սխալ է հասկացել այս գույգին, չի ապրել նրանց կյանքով, չի ընդունել նրանց իր սրտում:

Տեսնել մի փոքր մարդու ճակատագիր և չհասկանալ, թե նա ինչ ջրաղաց է ընկել, նշանակում է՝ նրա կյանքից ընդհանրապես ոչինչ չես հասկանում, և նրա ամեն մի գործողություն պետք է համարել որպես պատահական կամ եղծելի՝ իր իսկ արատավորության կամ մարմնավորման արտաճառով: Այնուամենայնիվ, քանի որ պարզ է, որ նույնիսկ ամենաաղմկոտ հոսքը բաղկացած է մանր կաթիլներից ու ցնցումներից և աչքի համար անտեսանելի մասնիկներից, ուստի պատմա-

կան մեծ իրադարձությունները հազեցած են փոքր, անտեսանելի և անանուն մարդկային կյանքերով: Հնարավոր է իմանալ, թե ինչպես կվարվի մոլեկուլը՝ առանց իմանալու, թե ուր է տարել նրան խելահեղ հոսքը: Կիսելագարվի՞ այս հոսքը, եթե չլցվի փոքր մասնիկների էներգիայով: Այս հարցերը պատասխաններ չունեն:

Այժմ մեքենայի հատակին պառկած եմ ընկերոջս կողքին, որը կռվի թեժ պահին, երբ մեռակ էր մնացել խրամատի մեջ, տեսել էր մոտեցող թշնամուն: Ընկերս նրան կհանդիպի իր վերջին մարտում, որի ավարտը կանխորոշված է:

...Եվ նա ատամներով պրկեց նռնակի օղակը՝ պառկելով գետնին: Հետո ներսից կծկվեց, աչքերը մթնեցին, բայց մի կերպ մնաց գիտակցության մեջ՝ երբին և սպասեց: Աստիճանաբար բաց թողեց նռնակի բռնակը և աղոթքի պես կիսածայն կրկնեց. «Դե արի՛, արի՛...»: Նա սպասեց. բոլորը վերածվեցին մեծ սպասման կենդանի մարմնավորման. նա այլևս ընդունակ չէր այլ բանի, չէր կարող նռնակը նետել մոտ եկողի վրա, կարող էր միայն պայթեցնել իր հետ...:

Ինչպես նախկինում, պառկած էր անշարժ, լայն հայացքով նայում էր իր պոտենցիալ մարդասպանին, հուսահատության արցունքները զլորվում էին այտերն ի վար: Խոհերը քրքրում էին նրան. «Ի՞նչ մնաց իրեն: Կանգնե՛լ, բղավե՛լ՝ ձեռքերդ վեր բարձրացնո՞ւմ եք, թե՞ լուռ ու հնազանդորեն վերցնենք այս վերջին գնդակը, որ հավերժ անհետանանք երկրի երեսից»:

Ո՛չ, նա տեղից վեր չէլավ, նա սարսռաց միայն այն ժամանակ, երբ լուծության մեջ մի կրա-

կոց արձակվեց... Եվս մեկ գնդակ խոցեց նրա արյունոտ մարմինը: Փամփուշը հարվածեց նրա ուսի՝ հավանաբար ջախջախելով ոսկորը, բայց, միևնույնն է, նա չշարժվեց կամ նույնիսկ չտնքաց: Վերջին մի ճիգով միայն սեղմեց ատամները և ընդմիշտ փակեց աչքերը: Վերջին դողդոջուն հույսով լսեց իրեն մոտեցող ոտնաձայները և մտածեց. «Միգուցե ամեն ինչ դեռ կորած չէ, միգուցե իրեն հաջողվի»: Նա դեռ անշունչ հույս ուներ: Դանդաղ, խիստ զգուշորեն հաղթահարելով իրեն բռնած նոր ցավը, շրջվեց կողքի՝ մարմնի տակից արձակելով նռնակը: Ազատեց նռնակը, հենց որ ճանապարհի ձայները մեռան մոտակայքում: Իր կողքին զգաց զսպանակի ցնցում, պայթուցիչի ուժեղ հարված: Թշնամին կարճ լաց եղավ՝ ակնհայտորեն փախչելով: Ընկերս դեռ հասցրեց լսել նրա ոտնաձայների դոփ-դոփը գետնին, իսկ հետո այլևս ոչինչ չլսեց...

Նրանց մեծ կերտվածքը բաժանվեց փոքր մասերի: Մի քանի վայրկյան անց, երբ արյան հետ խառնված փոշին նստեց, նրանք այլևս խրամատում չէին: Միայն մի փոքրիկ ամպանման գանգված էր քամուց ծխում խրամատի փորվածքներից մեկում. շուրջը ցրված արյան վրա գոյացավ հողաթունը. պայթյունից հետ չարտված թշնամու դիակն էր:

Երբ դու վիրավոր պառկած ես, և թշնամին մոտենում է քեզ, խնդրում ես Աստուծոց մի վերջին փամփուշտ կամ բեկոր, միայն թե հակառակորդիդ ձեռքը չընկնես: Այլապես ուժեղ, ինքնավստահ, ամողորձ հակառակորդը կտեսնի քո կոկորդը ականջից մինչև մյուս ականջ, աղամախնձորի հենց վերևում: Կկտրի շնչափողը՝ առանց զարկերակներից

վրա ազդելու: Այսպիսով, ավելի քիչ արյուն կլինի (դա չի բծելու հագուստը), և ավելի շատ՝ տանջանք: Դուք դեռ որոշ ժամանակ կապրեք. կթալառեք ու ի վերջո կմարեք մշծավանքե հոգեվարքի մեջ: Եվ այդժամ նա ձեր լեզուն կարող է մտցնել կտրվածքի մեջ:

...Պատերազմը հանկարծ ամեն տեղից լրջորեն եկավ, եկավ իրական, ամխմա: Այնուհետ մահն սկսեց լրտեսել յուրաքանչյուրին, թափառել, հետամտել, ինչ-որ բան շշմեցալ. տիպա՛ է պարանոցին ցրտաշունչ շնչելը: Բազմաթիվ դիակներ կային, հաշմվածներ ու վիրավորներ թե՛ թշնամու, թե՛ մեր կողմից, թեև իմ շրջապատից բոլորը ողջ մնացին: Պարզվում է՝ երբ ուրիշները անժանոթներն ու թշնամիներն են մեռնում, դա սարսափելի չէ: Կարծես մահն անցնում է քո կողքից: Դու քեզ վստահ ես գզում, նույնիսկ դուրս ես գալիս խրամատից, ցատկում, կրակում, գոռում, վազում: Բայց հենց որ սպանում են քո զինակցին, ծանոթին ու հատկապես ընկերոջդ, ա՛խ, սարսափելի է: Սարսափելի է, որ չես ուզում ապրել, առավել ևս՝ մեռնել: Ինչպե՞ս է, ինչո՞ւ, ինչո՞ւ է նա... ո՞վ է հաջորդը:

Ծանրաբեռն անտանիք մեքենան՝ «գերեվարված» զինվորներով, որ համարյա ոչ մի զգացում է արտահայտող մոխրագույն դեմքերով էին, միապաղաղ ընթացքով շարժվեց դեպի արևմուտք՝ փխլունք:

Սեպտեմբերի վերջին գիշերը երկար էր. այս գիշերը շատ բան տվեց ինձ: Մեքենան շտապում է ճանապարհի երկայնքով. ինձ ինչ-որ տեղ է տանում... Գուցե մի փոքր նեղսրտեմ՝ չիմանալով ո՞ւմ փամփուշտից հեռացա:

«ՀԵՏԱՊՆԴՈՂ ՀՈՂ»
վեպից հատված



ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՐԳՍՅԱՆ

«Արմավ» հրատարակչությունը լույս է ընծայել Հարություն Սարգսյանի «Թաքուն ասեմ» վերնագրով գիրքը, որում տեղ գտած բանաստեղծությունները աչքի են ընկնում մանկական անկեղծությամբ, աշխարհին ընկալելու խաղացկունությամբ և ուրախ թրթռումներով:

ՄԱՍԻՏ ԱՆԻՆ

Եկավ աշուն, պարեց քամին, Այգի մտավ փոքրիկ Անին Ու հավաքեց տատից թաքուն Տերևները հազարագույն: Մեծ բաժակով նա ջուր բերեց, Տերևները մեջը շարեց: Տատը տեսավ, իսկույն սաստեց.-Այ խենթ Անի, Աշնան քամին խելքդ տանի, Մեծ աղջիկ ես՝ չե՞ս ամաչում. Չոր տերևը ո՞վ է ջրում: -Տատիկ, մեղք եմ, չորացել եմ. ես ջրում եմ, Սակայն նրանք չեն կանաչում:

ԳՈՆԵ ՄԱՋԵՐԴ ՓՐԿԵՆՔ

Տատիս մեջքը կռացել է. Էլ ինձ չի գրկում, Գիրք կարդալը մոռացել է.

Հեքիաթ չի պատմում:

Տատս արդեն ծերացել է, Ձեռնափայտ ունի, Երկար ծալ-ծալ փեշի տակին էլ կոնֆետ չունի:

Հազար ու մի խրատներով Հոգիս է հանում, Աղմկում եմ եթե մի քիչ, Շատ է բարկանում:

Տատ ջան, ճերմակ քո մազերը Արի սև ներկենք, Մեջքդ ծուռ է, թող որ գոնե Մազերդ փրկենք:

ԳՈՂ ԿԱՏՈՒՆ

Մլավում է, մլավում, Մլավում է մեր կատուն, Չարածճի է դարձել, Էլ չենք թողնում նրան տուն:

Աղբն է խառնել ամանի, Կաթն ու մածունն է թափել, Որոշել է տատիկի Կծիկի բոլը չափել:

Մկներն էլ շատ աներես Չեն վախենում նրանից. Վազվզում են օրնիբուն, Յորեն տանում մառանից:

Պետք է պատժել մեր կատվին, Ականջները ոլորել, Բայց չենք գտնում մենք նրան, Չգիտենք՝ ուր է կորել:

ԾԱՆՐ ՊԱՅՈՒՄԱԿԸ

Մայրիկ, մեջքս ցավում է, Պայուսակն է մեղավոր, Այնքան շատ եմ տեսր ու գիրք, Որ դարձել է մեջքս կոր:

Մայրիկ, ասա՛ ինչ անեմ, Կեսը թողնե՞մ, կեսն հանե՞մ, Ճիշտ կլինի, որ դպրոց Պայուսակս չտանեն:

ԱՆԽԵԼՔ ՀԱԿԸ

Հավը հավկիթ ածեց, Ձեռքը աշխարհին առավ, Երբ հավկիթը բնից Տատիկը տուն տարավ:

Չալ աքլորն էլ կողքից Նախատում է հավին, Կարծես աղ է ցանում Նեղված հավի ցավին:

Բույնդ փոխիր, ա՛յ հավ, Ի՞նչ ես տակը լցրել, Անխելք գլխիդ ձեռից Ձեռնդ աշխարհ ես գցել:

ԸՆԿԵՐԱՍԵՐ ՏՊԱՆ

Հեքիաթ պատմի՛ր ինձ, տատի՛կ, Պատմի՛ր, որ շուտ ես քնեմ, Ու մի քիչ էլ փող տուր ինձ, Որ պաղպաղակ ես գնեմ:

Մի քիչ շատ տուր, լա՛վ, տատի՛կ, Երկու բաժին որ գնեմ, Ի՞նչ թաքցնեմ քեզանից՝ Ընկերուհի ես ունեմ:

ԾՆՆՂՅԱՆ ՆԿԵՐ

-Դավիթ, այսօր քո Ծննդյան օրն է, Ի՞նչ գնեմ, որ դու Ծիծաղես մի քիչ:

-Պապիկ ջան, գնի՛ր Սիրտդ ինչ կուզի, Միայն ո՛չ տետր, չ՝ գիրք, ո՛չ գրիչ:

ՓՈՔՐԻԿ ՆԿԱՐԻՉԸ

Պապիկ, խնդրում եմ Ակնոցդ տո՛ւր ինձ. Կուզեմ ակնոցով Արևին նայել:

Ախր արևը Աչքերս է ծակում. Չեմ կարողանում Նրան նկարել:

ԽՈՐԱՄԱՆԿ ՊԱՏԱՍԽԱՆ

-Նե՛րս եկ, Անի՛ ջան, Անձրև է դրսում. Թե հանկարծ թրջվես Ու հիվանդանաս, Ի՞նչ պիտի անենք, Վաղը դասի ես, Հակառակի պես Տանն էլ դեղ չունենք: -Ոչինչ, մայրիկ ջան, Ես էլ չեմ գնա, Մանավանդ՝ վաղը Ստուգարք ունենք:

ՋԳՈՒՇԱՅՈՒՄ

Անի՛, մաթեմդ Տո՛ւր, արտագրեմ, Թե չէ կավիճով Մեջքիդ կգրեմ:

-Է՛յ, չարածճի՛, Դու խելո՞ք մնա, Նամակ կգրեմ Ես վարչապետին, Որ որոշել ես Բռնի տիրանալ Ուրիշի գույքին: Սա զգուշացում, Թե չէ կփակվես Ուսուցչանոցում:

ԱՊԱԳԱ ՈՉԽԱՐԸ

-Սեթ, ոչխարի Ուղեղ ունես, Մեծ տղա ես, Բայց արի տես՝ Աղյուսակը Դեմ չգիտես:

Իսկ Արամը՝ Խելոք մի գառ, Պարապել է Ամբողջ ամառ, Ողջը գիտի Բերանացի, Տեր կդառնա Վաղը հացի:

-Քիչ սպասի՛ր, Ուսուչուհի՛, Մի՛ բարկանա Դու ինձ վրա: Ճիշտ է՝ գառ է. Երբ մեծանա, Նա էլ պիտի Ոչխար դառնա:

ԶԻ ԴԱՂԱՐԻ

-Դուռը ծածկի՛ր, ա՛յ տղա, Անձրև է գալիս դրսում: -Տա՛տ, ի՞նչ օգուտ դրանից, Չէ՛ որ պառկած ես ներսում:

-Հերիք խոսես անալի, Դուռը ծածկի՛ր, նե՛րս արի, Տատիկ, դուռն էլ թե ծածկեմ, Անձրևը չի դադարի:

6-Ը 9 Է ԵՐԵՎՈՒՄ

Այսօր 6 եմ ստացել, Տուն եմ դառնում դպրոցից, Հաջողակ է օրն այսօր, Ես դա գիտեմ իմ փորձից:

Օրագիրս տատիկս Ցույց եմ տալիս շուռ տված. 6-ը 9 է երևում, Նա ժպտում է զարմացած:

Ծիծաղում է քթի տակ, Սպասում եմ տատիկիս, Գրպաններն է փորփորում Ու մի կոնֆետ տալիս ինձ:

ԿԱՐՈՂ ԵՄ

Իմ անուշ թռնիկ, Շատ գրքեր կարդա, Եղիր գրագետ Ես շատ եմ ուզում, Որ երբ մեծանաս, Դու դառնաս մարզպետ:

Պապիկ, մեր մարզում Ամեն կիրակի Մարզպետ եմ փոխում, Դպրոց չեմ գնա, Մի քանի օրից Իմ հերթն էլ կգա:

Այնքան էլ պետք չէ Լինել գրագետ, Որ դառնաս մարզպետ, Թե շատ ես ուզում, Կարող եմ մույնիսկ Դառնալ վարչապետ:

ԵՍ ԷԼ ԵՄ ՈՒՋՈՒՄ

-Ասա՛ ինձ, պապիկ, Իմ քեռին Առնակ Ինչո՞ւ չգնաց Հայկական բանակ: -Բանակ չգնաց Քեռիդ հարազատ՝ Երեխա ուներ Արդեն երկու հատ:

-Լսի՛ր ինձ, պապիկ, Բայց չնախատես, Ուզում եմ մի բան Թաքուն ասել քեզ: Ես էլ եմ ուզում Շատ երեխաներ, Որ ինձ չտանեք Դպրոց կամ պարտեզ: Ուզում եմ դառնալ Քեզ պես մեծ պապիկ, Երդվում եմ լինել Միշտ գերազանցիկ:

ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ՝ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՎԵՐԱՅՈՒՄ

Դեռևս 2024 թ. սեպտեմբերի



10-ին «Համազգային հայ կրթական և մշակութային միություն» հիմնադրամի երևանի գրասենյակի նախաձեռնությամբ, Երևանի պետական համալսարանի աստվածաբանության և պատմության ֆակուլտետների համագործակցությամբ ԵՊՀ-ում կայացավ «Հայոց եկեղեցու դերը պետականության բացակայության պայմաններում» վերտառությամբ գիտաժողովը, ապա հոկտեմբերի 15-ին նույն գրասենյակի նախաձեռնությամբ, Հայաստանի ճարտարապետների պալատի հետ համագործակցությամբ կայացավ համահայկական գիտաժողով «Հովհաննես Քաջազունին ճարտարապետ» խորագրով: Երկու կարևոր գիտաժողովների նյութերը ամփոփվեցին համաձայն ժողովածուներում, որոնց շնորհանդեսը կայացավ նախ երևանում, ապա՝ Գյումրիում:

Միջոցառումը Գյումրու «Շիրվանյան» երիտասարդական կենտրոնի սրահում էր: Ներկա էին բազմաթիվ հյուրեր՝ ներկայացվող բնագավառներին առնչվող մասնագետներ, գրքերի նյութերի արդիականությանը հետաքրքրվածներ: Հանդիսությամբ ներկա էր նաև ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Միեր Մելքոնյանը:

Ցերեկույթը բացվեց ՀԱԵ Շիրակի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Միքայել արքեպիսկոպոս Աջապայիանի ուղերձով, որն ընթերցեց Բարեշնորհ Արտաշես սարկավազը:

Լույս տեսած գրքերին նախորդող իրադարձությունների գիտական աշխատանքի ամփոփ պատկերը ներկայացրեց Համազգայինի Երևանի գրասենյակի պատասխանատու Ռուզան Առաքելյանը: Արվեստագիտության

թեկնածու, դոցենտ Արաքս Մարգարյանի խոսքը Հովհաննես Քաջազունի ճարտարապետի մասին էր՝ ժամանակի իրադարձությունների հենքին, պատմաբան Դերենիկ Մալխասյանը երևույթը դիտարկեց իր՝ մասնագիտական տեսանկյունից, ապա Գյումրու Քաղաքային ուսումնասիրությունների կենտրոնի տնօրեն Աշոտ Միրզոյանի գնահատականն էր՝ որպես մի շարք բնությունների արդյունք ձևավորված:

Միջոցառման գեղարվեստական մասը ինքնատիպ կատարումներով ապահովեցին «Մի սար» սիմֆոնիկ նվագախմբի և երգչախմբի երաժիշտները /գեղարվեստական ղեկավար և դիրիժոր՝ Արևիկ Թանաշեան/: Երաժշտական կատարումով հանդես եկավ նաև Արևիկ Թանաշեանը:

Ամփոփիչ խոսքը Համազգա-

յինի Գյումրու գրասենյակի պատասխանատու Արա Նախշաբարյանին էր:

Նույն ՆԻԿՈՂՈՍՅԱՆ



Հրատարակված է ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ:

Լրատվական գործունեությունն իրականացնող՝ Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային մասնաճյուղ: Հասցեն՝ Շիրակի մարզ, Գյումրի, Գորկու 62 Վկայական N 01Բ 001543

տրված է 21.03.2005թ. հեռ. (094) 53 44 64 Խմբագրական խորհուրդ Գլխավոր խմբագիր՝ Ռոզա Հովհաննիսյան

Համակարգչային ձևավորումը՝ «Էլիտարդ Պրինտ» ՍՊԸ Տպագրված է «Վան Արյան» հրատարակչատան տպարանում Տպաքանակը՝ 500 Ծավալը՝ 2 տպագրական մամուլ